

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ**

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

***Հրատարակվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի երաշխավորությամբ***

Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման
վկայական 03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ գլխավոր խմբագրի տեղակալ
Ա. Մնացականյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

**ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ПОЛИЦИИ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ"**

"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
*Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса полиции Республики Армения*

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В
ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ
ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА
СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: заместитель главного редактора Артак Мнацакян

**FOUNDER AND PUBLISHER:
"POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA" STATE NON-PROFIT
ORGANIZATION**

"BULWARK OF LAW" scientific-methodical journal

**It is published with the warranty of the Scientific Council of the Police
Educational Complex of RA**

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

The representative of the journal publishing: Deputy Head of the editor-in-chief
A. Mnatsakanyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ի.գ.թ. **Տիգրան Եսայան,**

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան,**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Արա Ֆիդանյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան,**

ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Մերգել Առաքելյան,**

ՀՀ ոստիկանության պետի գլխավոր խորհրդական, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ. **Գրիգոր Բաղիրյան,**

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան,**

ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան,**

ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետ, ոստիկանության գնդապետ **Աշոտ Անարունյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գազիկ Գրիգորյան,**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան,**

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով,**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով,**

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավաուն:**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор- кандидат юридических наук *Есаян Тигран Микаелович*,

Заместитель главного редактора- начальник учебно-методического управления Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент *Мнацаканян Артак Самвелович*,

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Заместитель начальника полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук *Фиданян Ара Хоренович*,

Начальник Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент *Мурадян Манук Оганнесович*,

Судья конституционного суда Республики Армения, доктор юридических наук, профессор *Хачатрян Ашот Гайкович*,

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор *Аракелян Сергей Ваганович*,

Главный советник начальника Полиции Республики Армения, полковник полиции, доктор юридических наук *Бадилян Григор Микаелович*,

Заслуженный юрист РА, кандидат юридических наук *Кочарян Оганнес Ишханович*,

Начальник Юридического управления Полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук *Марандян Руслан Рафикович*,

Начальник Управления по связям с общественностью и информации Полиции Республики Армения, полковник полиции *Агаронян Ашот Сирасович*,

Первый заместитель начальника Образовательного комплекса полиции Республики Армения, подполковник полиции, кандидат юридических наук, доцент *Маркосян Мисак Меружанович*,

Начальник академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент *Григорян Гагик Таарович*,

Заместитель начальника академии Образовательного комплекса полиции Республики Армения, полковник полиции, кандидат юридических наук, доцент *Оганесян Артак Робертович*,

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, доктор технических наук, профессор, генерал-майор полиции *Булгаков Олег Митрофанович*,

Первый заместитель начальника Академии управления МВД России, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент *Парадников Александр Геннадьевич*,

Заместитель начальника Санкт-Петербургского университета МВД РФ (по научной работе), полковник полиции доктор юридических наук, профессор, *Бавсун Максим Викторович*.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասլանյան Արայիկ

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՍԽԱԼՆԵՐԸ
ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.....7

Բազրատյան Ազատ

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....23

Մարգարյան Հայկ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ.....32

Նալբանդյան Անահիտ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՈՉ
ՄԱՔՍԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ.....43

Մարդարյան Վահագն

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....50

Քուրքյան Ծովինար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....65

Бахур Олег Иванович

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРАВОВОЙ РЕГЛАМЕНТАЦИИ ИНЫХ МЕР
УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ
РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ И НЕКОТОРЫХ ЗАРУБЕЖНЫХ СТРАН81

Волчкевич Ольга Владимировна

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ГРАЖДАНСТВА
РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ.....91

Зайцев Владимир Петрович

К ВОПРОСУ ОБ УСТАНОВЛЕНИИ РАЗМЕРА ПРИЧИНЕННОГО ВРЕДА В
КОНТЕКСТЕ НАЛОЖЕНИЯ АРЕСТА НА ИМУЩЕСТВО В УГОЛОВНОМ
ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ.....101

Ковальчук Алексей Васильевич, Духовник Юрий Евгеньевич

ТЕОРЕТИКО-ПРИКЛАДНАЯ ПРОБЛЕМА ИСПОЛЬЗОВАНИЯ ТЕРМИНА
«ТЕЛЕСНОЕ ПОВРЕЖДЕНИЕ» В УГОЛОВНОМ КОДЕКСЕ РЕСПУБЛИКИ
БЕЛАРУСЬ..... 111

Колбасин Владислав Владимирович

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ОТДЕЛЬНЫЕ ВИДЫ СЕКСУАЛЬНОГО
НАСИЛИЯ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ..... 118

Стефаненко Алексей Петрович

ОСОБЕННОСТИ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОГО СОПРОВОЖДЕНИЯ
ПРОЦЕССУАЛЬНЫХ ДЕЙСТВИЙ СЛЕДОВАТЕЛЯ..... 129

Терехов Максим Геннадьевич

РОЛЬ ОПРЕДЕЛЕНИЯ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО РЕЖИМА ЦИФРОВЫХ
АКТИВОВ В ОБЕСПЕЧЕНИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ
ГОСУДАРСТВ-ЧЛЕНОВ ОДКБ..... 139

Minasyan Meri

THE USE OF FORCE BY LAW ENFORCEMENTS: LESSONS LEARNED FROM
THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS..... 151

Sargsyan Lida

THE INDEPENDENCE OF JUDGES /JUDICIARY/ AND HUMAN RIGHTS..... 165

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԽԱԼՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ասլանյան Արայիկ

*ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական
վարչության քրեագիտական հետազոտությունների
բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Հայտնի քրեագետներից Ռ.Ս. Բելկինը ժամանակին նշել է. «Փորձագետի եզրակացությունը պետք է լինի անսխալ, ինչը պահանջում է՝ փորձագիտական սխալների ժամանակին ճանաչում, կանխում, ինչպես նաև նպաստող պատճառների վերացում»:¹

Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ ինչպես ցանկացած անձ, փորձագետը նույնպես կարող է սխալվել իր հետևությունների մեջ: Ուստի, փորձագետի եզրակացությունը, ինչպես որևէ այլ ապացույց, չունի նախնական կանխորոշելիություն և առավելություն. այն գնահատվում է ընդհանուր կանոններով՝ այլ ապացույցների համակցության մեջ:²

Ինչպես վկայում է պրակտիկան, փորձագիտական եզրակացության գնահատման ընթացակարգում փորձագիտական սխալների հայտնաբերումը հաճախ կարող է իրականացվել քննիչի (դատավորի), հազվադեպ՝ կոնկրետ փորձագետի (փորձագիտական հանձնաժողովի) կամ էլ փորձագիտական հաստատության ղեկավարության կողմից:³ Ընդհանրապես դատափորձագիտական պրակտիկայում փորձագիտական սխալի ձևավորման պատճառները կարող են տարբեր լինել: Այդպիսի պատճառների ձևավորման հարցում կարող են էական ազդեցություն ունենալ ինչպես քննվող գոր-

¹ Տե՛ս. **Белкин Р. С.** Криминалистическая энциклопедия. М.: Изд-во «БЕК», 1997, էջ 157:

² Տե՛ս. Уголовный процесс: учебник / **С.В. Зуев, К.И. Сутягин**. Челябинск: Издательский центр ЮУрГУ, 2016, էջ 97:

http://kalinovskiy-k.narod.ru/b1/zuev_sutjagin_ugolovnyj_process_uchebnik_2016.pdf

³ Տե՛ս. **Мишин А. В.** Судебная экспертиза в досудебном производстве по уголовному делу/ Учебное пособие, научный редактор – доктор юридических наук, профессор **А. Ю. Епихин**, Казанский федеральный университет, 2017, էջ 42:

https://kpfu.ru/staff_files/F739646847/UCHEBNOE_POSOBIE_SUDEBNAYa_EKSPERTIZA_V_DOSUDEBNOM_PROIZVODSTVE_PO_UGOLOVNOMU_DELU_10.01.pdf

ծի նյութերը, տվյալ փորձաքննությանը նախորդած այլ փորձաքննությունների արդյունքները, փորձագիտական հաստատության ղեկավարության, քննիչի, դատավարության այլ մասնակիցների վարքագիծը, այնպես էլ փորձագետի մասնագիտական ոլորտին վերաբերող օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքները:

Դատափորձագիտական հաստատության փորձագետը պատասխանատու է փորձաքննության պատշաճ կազմակերպման և կատարման, ինչպես նաև անհրաժեշտ գիտամեթոդական մակարդակի ապահովման ողջ ընթացքի համար:

Փորձագիտական եզրակացության մեջ հանդիպող կազմակերպչական կամ մեթոդական բնույթի հնարավոր սխալները գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները՝

1) *փորձագետի եզրակացության մեջ հանդիպող և տարբեր կերպ ընկալվող տարաբնույթ մասնագիտական հասկացությունների կիրառումն* այն պարագայում, երբ վերոնշյալների փոխարեն կարող են գործածվել մասնագիտական բնույթի միատեսակ կամ միասնական նշանակությամբ ընկալվող հատուկ հասկացություններ: Այսինքն՝ փորձագետի եզրակացությունը մի կողմից պետք է կառուցված լինի մասնագիտական, իսկ մյուս կողմից՝ տվյալ ոլորտի մասնագետ չհանդիսացող և դատավարության մասնակիցների համար բավականաչափ ընկալելի համարվող բնորոշ հասկացություններից: Եթե փորձագետը եզրակացության մեջ գործածում է համընդհանուր ընկալման տեսանկյունից ոչ ընդունելի համարվող եզրույթներ, ապա նա պարտավոր է տալ նաև դրանց պարզաբանումները:⁴ Այս իմաստով, կարծում ենք, ավելի ողջամիտ կլինեն, եթե հետազայում (նախատեսվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում) ՀՀ-ում ներդրվեր *միասնական դատափորձագիտական պրակտիկայի* գաղափարը.

2) *փորձագետի եզրակացության ոչ հստակ լինելը*՝ պայմանավորված եզրակացության հետազոտական տվյալների մասնակի, ոչ ամբողջական կամ անորոշ լինելու հանգամանքով, որը մի շարք դեպքերում կարող է հանգեցնել վերջինիս ապացուցողական նշանակության կորստին.

⁴ St' u. Судебная экспертиза. Выпуск 4 (28) 2011: научно-практический журнал.- Волгоград : ВА МВД России, 2011, էջ 11:

3) *փորձագետի եզրակացության անհամապատասխանությունը* դատավարական օրենսդրությամբ սահմանված ընդունելի պահանջներին.

4) *փորձագետի կողմից եզրակացության արդյունքներով հաստատված փաստերի վերաբերյալ իր իրավասության շրջանակներից չբխող հարցերի շուրջ (օրինակ՝ իրավաբանական բնույթի) որակումներ տալը կամ այդպիսի որակումներ տալու փորձերը*: Սույն օրենսդրական պահանջն ամրագրված է ՀՀ գործող ՔԴՕ-ի 85-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում՝ ըստ որի փորձագետը *պարտավոր է* հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե առաջադրված հարցերը դուրս են գալիս իր հաստուկ գիտելիքների շրջանակներից, կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար՝ այդ մասին կազմելով եզրակացություն:

Փորձագետի խնդիրն է հետազոտական աշխատանքների արդյունքում վարույթն իրականացնող մարմնին ապահովել այնպիսի փաստական տվյալներով, որոնք կարող են բավարար լինել որպես ապացույց ճանաչելու և գործի համար էական նշանակություն ունեցող որոշումներ կայացնելու համար:

Սույն հարցի կապակցությամբ տեղին է նշել ՍՍՀՄ Գերագույն դատարանի 1971թ. մարտի 16-ի՝ «Քրեական գործերով դատական փորձաքննությունների մասին» №1 որոշումը, որտեղ բարձրագույն դատական ատյանն առաջին անգամ հայտնել է իր դիրքորոշումը հետևյալի մասին. «(...) *դատարանների կողմից երբեմն նշանակվում են փորձաքննություններ, որոնք չեն պահանջում հաստուկ գիտելիքների իմացություն, կամ էլ՝ փորձագետի առջև դրվում են իրավական և այլ բնույթի այնպիսի հարցեր, որոնց պատասխանները դուրս են նրանց իրավասության շրջանակներից...*»⁵

Ի հավելումն վերը նշվածի՝ ՀՀ Գերագույն դատարանի պլենումը դեռևս 26.05.1992 կայացրած համապատասխան որոշմամբ («Քրեական գործերով դատական փորձաքննության մասին») ամրագրեց հետևյալ դիրքորոշումը.

«(...) *Քննության առնելով քրեական գործերով փորձաքննություններ կատարելու պրակտիկան՝ ՀՀ Գերագույն դատարանի պլենումը նշում է, որ դատարանները և նախաքննության մարմիններն օրենքին համապատասխան փորձաքննություն են նշանակում՝ գործի համար կարևոր նշանակություն ու-*

⁵ Մանրամասն տե՛ս. Постановление Пленума Верховного Суда СССР от 16 марта 1971 г. N 1 "О судебной экспертизе по уголовным делам" - <https://base.garant.ru/1305273/>:

նեցող հանգամանքները պարզելու համար: Դրա հետ մեկտեղ, դատարանները երբեմն փորձաքննություն են նշանակում՝ պարզելու այնպիսի հարցեր, որոնց լուծումը հատուկ գիտելիքներ չի պահանջում, կամ փորձագետների առջև իրավական և այլ բնույթի այնպիսի հարցեր են դնում, որոնց պատասխանները դուրս են գալիս նրանց իրավասության սահմաններից: Առանձին դեպքերում դատարանները, հակառակ օրենքի պահանջներին, փորձագետի եզրակացությանն առավելություն են տալիս մյուս ապացույցների հանդեպ՝ առանց այն մանրագնին հետազոտելու և պատշաճ գնահատելու:

Քրեական գործերով փորձաքննություններ կատարելու վերաբերյալ օրենսդրությունը ճիշտ կիրառելու նպատակով ՀՀ Գերագույն դատարանի պլենումը **որոշում է՝**

1. Դատարանների ուշադրությունը հրավիրել փորձաքննություն կատարելու միջոցով քրեական գործի հանգամանքները լրիվ, բազմակողմանի ու օբյեկտիվ հետազոտելու անհրաժեշտության վրա՝ այն բոլոր դեպքերում, երբ դատական քննության ժամանակ ծագող հարցերի լուծման համար պահանջվում են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի հատուկ գիտելիքներ (...),

2. Դատարանները պետք է նկատի ունենան, որ փորձագետի եզրակացությունն ինքնուրույն ապացույցի տեսակ է, և փորձաքննության նշանակման ու կատարման ժամանակ պետք է պահպանվեն քրեական դատավարության օրենքի բոլոր պահանջները (...):⁶

Այլ կերպ ասած՝ դատական փորձաքննությունը նշանակվում է, երբ գործով (քրեական, քաղաքացիական, վարչական), ենթադրաբար ապացուցողական նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանման նպատակով, անհրաժեշտ են լինում գիտության, տեխնիկայի, բժշկության, արվեստի և մարդկային գործունեության այլ ոլորտներին վերաբերող հատուկ գիտելիքներ:

Սակայն խնդիրն այն է, որ օրենքը չի պարզաբանում «հատուկ գիտելիքներ» եզրույթի էությունը: Իրավաբանական գրականության մեջ այս հարցում ևս չկա միասնական մոտեցում: Կարելի է միայն նշել, որ դատավարագետների մեծամասնությունն այս հարցում սահմանափակվում է միայն

⁶ Մանրամասն տե՛ս. ՀՀ Գերագույն դատարանի պլենումի 26.05.1992թ.-ի որոշումը՝ «Քրեական գործերով դատական փորձաքննության մասին»:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=17969>

«հատուկ գիտելիքները» իրավական ոլորտի գիտելիքներից տարանջատելով:⁷

Օրենսդիրն իրավական հարցերով որոշումներ կայացնելը համարում է հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի և դատավորի բացառիկ իրավասությունը. դատական պրակտիկայում փորձագետին այդպիսի հարցեր առաջադրելը (*ինչպիսիք են, օրինակ, սպանության կամ ինքնասպանության, գողության կամ պակասորդի, ավազակության կամ կողոպուտի հանցագործություններ՝ ուղղակի կամ անուղղակի դիտավորությանը կատարված լինելու հանգամանքներում*) անընդունելի է: Առկա տեսակետներից մեկի համաձայն՝ հատուկ գիտելիքների իմացությունը չպետք է օգտագործվի այնպիսի հարցերի լուծման նպատակով, որոնք կարող են պատասխանվել հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի և դատավորի կողմից՝ իրենց մասնագիտական պատրաստվածության, ողջամտության և կենսափորձի վրա հիմնվելով:⁸

Ինչպես քննչական, այնպես էլ փորձագիտական սխալի դեպքում համարվում է, որ այն *բարեխիղճ մոլորության* արդյունք է. սույն հատկանիշի միջոցով է, որ վերջինս (փորձագիտական սխալը) տարբերվում է արդարադատության դեմ ուղղված այն հանցագործությունից, ինչպիսին է *կեղծ եզրակացություն տալը* (ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդված՝ **«Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը»**): Մասնավորապես ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածը, ի թիվս նորմի դիսպոզիցիայում նկարագրված այլ արարքների, պատասխանատվություն է նախատեսում փորձագետի կողմից քրեական կա՛մ քաղաքացիական, կա՛մ վարչական դատավարության գործով տրված ակնհայտ կեղծ եզրակացության համար:

Նույնիսկ այն դեպքերում, երբ փորձագետը գիտակցաբար հրաժարվում է համապատասխան (երաշխավորված) մեթոդիկան կիրառելուց, ապա դա նույնպես կարող է դիտարկվել որպես *մոլորության արդյունք*: Խնդիրն այն է,

⁷ Տե՛ս. Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում: Ոստումական ձեռնարկ/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ. **Ա. Եզեկյան** – Եր.: ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո, 2014, էջ 42:

⁸ Տե՛ս. Уголовный процесс. Учебник для студентов юридических вузов и факультетов (под ред. **К.Ф. Гуценко**). – Изд-во "Зерцало", 2005г., էջ 118:
http://lib.maupfb.kg/wp-content/uploads/Ugolovnyy-process_Pod-red-Gucenko-K.F_Uchebnik_izd-Zercalo-2005-736s.pdf

որ փորձագետը, համապատասխան մեթոդիկան չկիրառելով, անկեղծորեն կարծում է, որ այն ճիշտ է, և գործի շահերից ելնելով՝ ընկնում բարեխիղճ մոլորության մեջ: Փորձագիտական սխալն արդարադատության դեմ ուղղված հանցագործություններից տարբերակվում է հատկապես այս հատկանիշի միջոցով:⁹ Այսինքն՝ սխալը ոչ թե փորձագետի չգիտակցված գործողությունների կամ դատողությունների կատարման, այլ դրանց սխալական լինելու էությունը փաստացի չգիտակցելու մեջ է:

Փորձագետը կեղծ եզրակացություն տալու պարագայում հստակ գիտակցում է կատարվածի կեղծ կամ ոչ ճիշտ լինելը: Այսինքն՝ վերջինիս մոտ ձևավորված այն հոգեբանական վիճակը, որն ի հայտ է գալիս վերը նշված գործողությունների կատարման ընթացքում, իբրև բարեխիղճ մոլորության արդյունք, ակնհայտորեն *բացակայում է*: Եթե փորձագետը բարեխիղճ մոլորության արդյունքում չի գիտակցում իր կատարած գործողությունների կամ դատողությունների սխալական լինելը, ապա ակնհայտ կեղծ եզրակացություն տալու պարագայում վերջինիս գործողությունները գիտակցված են և ուղղված փորձաքննության ենթակա օբյեկտներին վերաբերող էական փաստերը (կամ՝ դրանց վերաբերող որոշակի ակնհայտ առանձնահատկությունները) *ուղղակի դիտավորությամբ* անտեսելուն, ոչ ճիշտ գնահատականներ տալուն կամ լռության մատնելուն: Միևնույն ժամանակ, դրանք կարող են նաև արտահայտվել գործին վերաբերող փաստերը խեղաթյուրելու, ինչպես նաև հետազոտության ներկայացված նյութերով կեղծ հետևությունների հանգելու տեսքով:¹⁰

Մեկ այլ բնորոշման համաձայն՝ *փորձագետի կեղծ եզրակացությունը* կարող է դրսևորվել հետազոտական նյութ հանդիսացող փաստերի ոչ ճիշտ շարադրման (փաստերի խեղաթյուրման կամ դրանց առկայության մասին լռելու), փաստերի սխալ գնահատման, հետազոտման մեթոդների սխալ կիրառման կամ սխալ եզրակացությունների կազմման մեջ:¹¹ Ինչ վերաբերում է փորձագետի եզրակացության «*ակնհայտ*» կեղծ լինելուն, ապա այն՝ որպես

⁹ Տե՛ս. *Белкин Р.С.* Курс криминалистики. В 3-х т. Т.2., 1997, էջ 329:

<https://studfile.net/preview/5352342/>

¹⁰ Տե՛ս. Курс уголовного права. Особенная часть. Том 5. Учебник для вузов. Под. ред. док. юрид. наук. проф. *Г. И. Борзенкова* и док. юрид. наук. проф. *В. С. Комиссарова*. - М.: ИКД "Серцало-М", 2002, էջ 174:

¹¹ Տե՛ս. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. *Գ.Ս. Ղազիկյանի*, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 849:

սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, մոլորեցնող բնույթ կրող սուս ցուցմունքներ տալու կամ ոչ ճիշտ թարգմանություններ կատարելու արարքների նկատմամբ ունի սահմանազատող նշանակություն:¹² *«Ակնհայտ»* լինելու հատկանիշը քրեորեն պատժելի համարող սույն արարքը սահմանազատում է անգգուշությամբ կատարված ոչ պատժելի գործողություններից:¹³ Այսինքն՝ որպես պետական մարմնում մշտական գործառույթ իրականացնող պաշտոնատար անձ, փորձագետի կատարած արարքի սուբյեկտիվ կողմը բնութագրող, կարևոր հատկանիշ հանդիսացող *ակնհայտությունը* նաև ենթադրում է, որ պաշտոնատար անձը պետք է գիտակցի, որ նա դուրս է գալիս օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:¹⁴ Հարկ է նկատել, որ պաշտոնատար անձն իրականում չի կարող ակնհայտորեն դուրս գալ իր պաշտոնական լիազորությունների շրջանակից, եթե այդ ակնհայտությունն իր կողմից չգիտակցվի: Այլ կերպ ասած՝ ակնհայտության հատկանիշը վկայում է տվյալ հանցանքը միայն դիտավորությամբ կատարելու հնարավորության մասին:¹⁵ Նշված պաշտոնատար անձն իր պաշտոնական լիազորություններին չի կարող վերաբերվել նաև հայեցողական կարգով: Ինչպես նշված է ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան որոշման մեջ՝ պաշտոնատար անձը չի կարող հայեցողաբար փոփոխել իր լիազորությունների էությունը կամ որ նույնն է՝ պարտադիր լիազորությունները փաստացի փոխակերպել հայեցողական լիազորությունների, ինչպես նաև չի կարող հրաժար-

¹² Տե՛ս. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики /Под общ. ред. **В. В. Мозякова**, ЭКЗАМЕН, М., 2002г., էջ 726:

¹³ Տե՛ս. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации /Под общ. ред. док. юрид. наук, Председателя Верховного Суда РФ **В. М. Лебедева** и док. юрид. наук, проф. **Ю. И. Скуратова**. – 4-е изд., перераб. и доп.-М.: Издательство НОРМА, 2002г., էջ 814:

¹⁴ Տե՛ս. Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները /գիտագործնական մեկնաբանություններ/, ՀՀ հատուկ քննչական ծառայություն, գիտական խմբագրությամբ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության գեներալ-լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ վաստակավոր իրավաբան **Վ. Գ. Շահինյանի**, Երևան, «Տիգրան Մեծ», 2015թ., էջ 43:

<http://www.ccc.am/files/pashtoneakan.pdf>

¹⁵ Տե՛ս նույն տեղը՝ էջ 44:

վել իրականացնել իր պարտադիր լիազորությունները հայեցողական լիազորությունների գործադրմամբ կամ որևէ այլ պատճառաբանությամբ...»¹⁶

Կեղծ եզրակացություն տալու հանցակազմը համարվում է ավարտված. նախաքննության փուլում՝ նախաքննության կամ հետաքննության մարմնին այն ներկայացնելու, իսկ դատաքննության փուլում՝ փորձաքննության բովանդակությունը դատարանում ներկայացնելու պահից սկսած:¹⁷

Բացի քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերից՝ ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածի (*Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը*) 3-րդ մասը նախատեսում է նաև խրախուսական նորմ, ըստ որի՝

«(...) Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հիմքով անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար կամ նոտարական ակտի կայացման համար կամ նա նախնական քննության կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը կամ նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողության ընթացքում մինչև նոտարական ակտ կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, կեղծ եզրակացության կամ սխալ թարգմանության մասին»:¹⁸

Կարծում ենք, որ օրենսդրի կողմից սույն խրախուսական նորմի նախատեսումը ցույց է տալիս, որ նա, այնուամենայնիվ, շահագրգռված է փորձաքննություն կատարող սուբյեկտի (փորձագետի) դրական վարքագծով՝ դրանով իսկ նպաստելով ճշմարտության բացահայտմանն ու արդարության վերականգնմանը:

Պատճառահետևանքային իմաստով՝ փորձագիտական սխալները միշտ չէ, որ կարող են փորձագետի թերի գործունեության արդյունք լինել: Մաս-

¹⁶ Տե՛ս. ՄԴՈ-1518 որոշումը. այն վերաբերելի է սահմանադրական ցանկացած այլ մարմնի, իրավասու սուբյեկտի կամ պաշտոնատար անձի համար:

¹⁷ Տե՛ս. Уголовное право. Особенная часть: Учебник для вузов /Отв. ред. – проф. **И. Я. Козначенко**, проф. **З. А. Незнамова**, доц. **Г. П. Новоселов**. – 3-е изд., изм. и доп. – М.: Издательство НОРМА ПИздательская группа НОРМА - ИНФРА . МП, 2001, էջ 811:

¹⁸ Նմանատիպ քրեաիրավական նորմ նախատեսված է նաև՝ ՀՀ նոր քր. օր-ի /ընդունված՝ 05.05.2021թ., ուժի մեջ է մտնելու 01.07.2022թ./ 504-րդ հոդվածի /*Սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելը*/ 3-րդ մասում:

նավորապես՝ փորձագետի կողմից իրականացված հետազոտությունները, օրինակ, կարող են լինել անթերի, իսկ կատարված հետևություններն ամբողջությամբ համապատասխանեն հետազոտությամբ ստացված արդյունքներին, սակայն փորձաքննության համար տրամադրված անհրաժեշտ ելակետային տվյալները լինեն ոչ ճիշտ կամ ամբողջական: Այսինքն՝ տրամադրված տվյալները լինեն սխալ, կեղծված կամ որևէ առնչություն չունենան կոնկրետ գործի և հետազոտությանը տրամադրված օբյեկտի հետ: Տվյալ դեպքում փորձագետի եզրակացությունը գործի համար էական նշանակություն ունեցող իրական հանգամանքների բացահայտման տեսանկյունից նույնպես կարող է սխալ գնահատվել: Նշված իրավիճակներում փորձագիտական սխալի մասին խոսք լինել անգամ չի կարող այնքան ժամանակ, քանի դեռ գործ ունենք փորձաքննություն նշանակած մարմնի իրականացրած ոչ ճիշտ կամ միտումնավոր (դիտավորությամբ) սխալ գործողությունների (իրավախախտումների) հետ:

Այսպիսով՝ ելակետային տվյալների սխալական լինելը գրկում է փորձագետի եզրակացությունն ապացուցողական նշանակությունից:¹⁹

Փորձագիտական սխալի պատճառները, որպես կանոն, դասակարգվում են երկու խմբի, դրանք են՝

1) *օբյեկտիվ պատճառներ*, որոնք կախված չեն փորձագետի՝ որպես փորձաքննություն իրականացնող սուբյեկտի փորձագիտական հետազոտություններից,

2) *սուբյեկտիվ պատճառներ*, որոնք հիմնված են փորձագետի կոնկրետ դատողությունների կամ գործողությունների վրա:

Փորձագիտական սխալների նման դասակարգումը, ըստ էության, կրում է զուտ պայմանական բնույթ և ունի մեթոդաբանական նշանակություն: Ինչպես ընդունված է ասել՝ **«սուբյեկտիվ պատճառներն ունենում են նաև օբյեկտիվ հիմքեր»:** Մասնավորապես՝ փորձագիտական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձագիտական սխալի օբյեկտիվ պատճառները երբեմն կարող են լինել նաև իրական, քանի որ դրանց առա-

¹⁹ См. у. Криминалистика /допущено министерством высшего и среднего специального образования РСФСР в качестве учебника для юридических факультетов и юридических институтов; отв. ред. заслуженный деятель наук РСФСР, проф. С. П. Митричев, проф. М. П. Шаламов/; всесоюзный юридический институт. Изд. Юридическая литература, М. 1966, էջ 422:

ջացման հիմքում ընկած են լինում բազմաթիվ այլ օբյեկտիվ պատճառներ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրականում հնարավոր չէ սպառնալիչ թվարկել բոլոր այն հնարավոր պատճառները, որոնք կարող են ընկած լինել փորձագիտական սխալի հիմքում, ուստի կարելի է սահմանափակվել միայն դրանցից առավել տարածված (տիպային) համարվող սխալները թվարկելով, մասնավորապես՝

1. որպես փորձագիտական սխալի **օբյեկտիվ պատճառներ**, որոնք կախված չեն փորձագիտական հետազոտություն իրականացնող սուբյեկտից (փորձագետից), կարող են հանդիսանալ՝

ա) համապատասխան տեսակի կամ սեռի օբյեկտների հետազոտման համար մշակված անհրաժեշտ փորձագիտական մեթոդիկաների բացակայությունը,

բ) կիրառվող փորձագիտական մեթոդիկաների թերի, ոչ արդիական կամ ոչ անհրաժեշտ չափով կատարելագործված լինելը,

գ) սխալ խորհրդատվության արդյունքում ոչ ճիշտ օգտագործված, ինչպես նաև վերջնական գիտական հիմնավորվածություն չստացած ու դեռևս փորձնական փուլում գտնվող մեթոդիկաների կիրառումը,

դ) ոչ սարքին վիճակում գտնվող կամ ոչ բավարար հագեցվածություն ունեցող տեխնիկական սարքավորումների կամ միջոցների օգտագործումը,

ե) փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ամբողջական տվյալների բացակայությունը,

զ) հետազոտվող հետքերում նույնականացվող կամ կողմնորոշիչ նշանակություն ունեցող բնութագրական հատկանիշների սակավ ինֆորմատիվությունն ու արտահայտման հարաբերական կայունությունը,

է) անհրաժեշտ հետազոտությունների կատարման համար օգտագործվող համապատասխան սարքավորումների կամ գործիքների սահմանափակ հնարավորությունները կամ դրանց աշխատանքում հանդիպող որոշակի անսարքությունների ու ծրագրային թերությունների առկայությունը,

ը) «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից չերաշխավորված ու դեռևս չստուգված սարքավորումների, տեխնիկական միջոցների կամ չափման միավորների օգտագործումը,

թ) չերաշխավորված համակարգչային ծրագրերի օգտագործումը և այլն:

2. Որպես փորձագիտական սխալի **սուբյեկտիվ պատճառներ** կարող են հանդիսանալ՝

ա) փորձագետի մասնագիտական անձեռնհասությունը,

բ) փորձագետի մոտ որոշակիորեն արտահայտված մասնագիտական բնույթի դեֆորմացիաների առկայությունը, որը կարող է ի հայտ գալ հետազոտությունների մակերեսային (ոչ խորքային) եղանակով կատարման, ինչպես նաև փորձագիտական բնույթի կոնկրետ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ժամանակակից (երաշխավորված) մեթոդական մոտեցումների կամ առաջարկությունների չկիրառման և անտեսման (ոչ լիարժեք տիրապետման) հետևանքով,

գ) փորձագետի գործառնության չարտականությունների կատարման համար անհրաժեշտ նորագույն սարքավորումների տեխնիկական հնարավորություններին կամ շահագործման պայմաններին (կանոններին) չտիրապետելը,

դ) փորձագետի զգայական-գնահատողական մոտեցումներում ձևավորված որոշակի թերացումների, ինչպես նաև արտակարգ հոգեվիճակներով պայմանավորված՝ ուղեկցող ազդեցությունների առկայությունը (օրինակ՝ սթրես, կոլեկտիվում բախում, հոգնածություն և այլն),

ե) փորձագետի մոտ որոշակիորեն ձևավորված կայուն անորոշության հստակ արտահայտվածությունը՝ փորձագիտական եզրակացության վերջնական արդյունքների ձևակերպման հանգամանքով պայմանավորված,

զ) փորձագետի կողմից իր ունեցած գիտելիքների, փորձի, հմտությունների կամ մասնագիտական որակների նկատմամբ անհիմն ցուցաբերած բարձր կամ չափազանցված (չարդարացված) ինքնավստահության դրսևորումը,

է) գործի նյութերի ազդեցությունը՝ պայմանավորված նախորդ եզրակացության մեջ արտացոլված որոշակի արդյունքների արձանագրման հանգամանքով,

ը) առանց բավարար պատճառաբանության՝ կիրառված մեթոդաբանության ինքնատիպության կամ նորամուծության հիմնավորումը,

թ) փորձագիտական եզրակացությունների հետազոտական մասերում արտահայտված տրամաբանական հակասությունների կամ մասնագիտական հարցերի շուրջ ձևավորված որոշակի տարբերությունների առկայությունը,

ժ) փորձագիտական հետազոտությունների կազմակերպման և պլանավորման մեջ հանդիպող մասնագիտական թերացումների առկայությունը,

ժա) եզրակացության մեջ, նույնականացման բնույթ կրող էական հատկանիշների ոչ ճիշտ գնահատմամբ պայմանավորված, հետազոտական արդյունքների թերի օգտագործումը,

ժբ) փորձագիտական հետազոտության թերի, ոչ ամբողջական կամ միակողմանի իրականացումը,

ժգ) մեթոդիկաների ճիշտ օգտագործման համար պահանջվող անհրաժեշտ պայմանների չպահպանումը,

ժդ) մասնագիտական բացթողումները, մասնավորապես՝ հետազոտման ենթակա օբյեկտի համար էական նշանակություն ունեցող ոչ բոլոր հատկանիշների պարզումը,

ժե) փորձագիտական հետազոտության համար էական նշանակություն ունեցող այս կամ այլ հատկանիշների, ինչպես նաև հետազոտվող օբյեկտների անմիջական և ընդհանուր փոխկապակցվածությանը վերաբերող բնութագրիչ առանձնահատկությունների ակնհայտ անտեսումը և այլն:

Փորձագիտական պրակտիկայում այլ բնույթի սխալներ նույնպես կարող են հանդիպել, մասնավորապես՝

1) փորձագետի կողմից իրեն վերապահված իրավասության շրջանակներից դուրս գալը,

2) օրենքով չնախատեսված դեպքերում կամ իրավիճակներում փորձագիտական նախաձեռնություններով հանդես գալը,

3) հետևությունների հիմնավորումը՝ ըստ գործի նյութերի, այլ ոչ թե փորձագիտական հետազոտության արդյունքների,

4) փորձաքննության ենթակա նյութերի կամ օբյեկտների ինքնուրույն հավաքագրումն ու ներկայացված նյութերին կցելը,

5) քրեադատավարական նորմերի խախտումներով իրականացված եզրակացություն կազմելը և այլն:²⁰

Փորձագիտական սխալները կարող են ի հայտ գալ հետևյալ դեպքերում՝

1) փորձագետի եզրակացության կազմման, այդ թվում՝ հետևությունների ձևակերպման ցանկացած փուլում,

²⁰ Մանրամասն տե՛ս. 'Судебная экспертиза: типичные ошибки' (под ред. **Е.Р. Россинской**) ("Перспект", 2012), документ предоставлен КонсультантПлюс - дата сохранения: 23.10.2012, էջ 5:

<http://sudsovet.ru/content/files/00/0c/64/e093Eu5fBcW3.pdf>

2) հետազոտության արդյունքների վերլուծության և քննարկման ընթացքում, որը կարող է իրականացվել նաև փորձագիտական հանձնաժողովի կողմից,

3) նախորդ փորձաքննությունների վերլուծության ընթացքում,

4) փորձագիտական հաստատության կամ ստորաբաժանման ղեկավարի կողմից իրականացված փորձագիտական հետազոտության արդյունքների ստուգման ընթացքում,

5) քննիչի կամ դատավորի կողմից՝ փորձագետի եզրակացությունը գնահատելու ընթացքում,

6) դատավարության այլ մասնակիցների կողմից՝ փորձագետի եզրակացությանը վերաբերող համապատասխան միջնորդությունների ներկայացման, ինչպես նաև դրանց շուրջ իրականացվող քննարկումների ընթացքում:

Փորձագիտական սխալները երբեմն կարող են նաև նոր փորձաքննությունների նշանակման առիթ դառնալ. որոշակի արդյունքների գնահատման հանգամանքով պայմանավորված՝ դրանք կարող են քննչական կամ դատական սխալների հետևանք լինել:

Էական նշանակություն ունի նաև փորձաքննությամբ լուծվող հարցերի ճիշտ ձևակերպման խնդիրը: Մասնավորապես՝ առաջադրվող հարցերը պետք է լինեն պարզ, հստակ և հասկանալի՝ առանց երկակի իմաստ պարունակող մեկնաբանությունների: Դրանք պետք է լինեն պարզ և հասկանալի այնքանով, որ գործին մասնակցող համապատասխան սուբյեկտի համար, ով չունի հատուկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ որևէ պատկերացում, բովանդակությունը լինի միանշանակ և ընկալելի: Սակայն փորձագիտական և քննչական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ համապատասխան (ընդունելի համարվող) հարցաշարերի առկայությունն ինքնին դեռևս բավարար չէ այդ խնդիրը գործնականում լուծված դիտարկելու համար: Ընտրելով անհրաժեշտ հարցերը՝ միշտ չէ, որ քննիչը հաշվի է առնում իր տրամադրության տակ գտնվող (փորձաքննությանը ենթակա) բոլոր օբյեկտների առանձնահատկությունները, և միշտ չէ, որ վերջինս գիտակցում է, թե փորձագետին ինչպիսի հարցեր պետք է առաջադրել՝ հաշվի առնելով փորձաքննության համար որոշակի կարևորություն ներկայացնող օբյեկտների կամ դրանց հետ առնչվող հանգամանքների յուրահատկությունն ու նշանակությունը:

Ընդհանրացնելով սույն խնդրի շուրջ առկա մոտեցումները՝ ի վերջո, պետք է փաստել, որ փորձագիտական սխալները հայտնի են դառնում գործնական կամ գիտական նպատակներով իրականացվող փորձագիտական պրակտիկայի ուսումնասիրման և ընդհանրացման արդյունքում: Այդ սխալները կարող են նաև ի հայտ գալ ինչպես փորձաքննության կատարմանը ներկա գտնվող քննիչի, այնպես էլ փորձագետի եզրակացությունը գնահատող քննիչի կամ դատավորի կողմից: Հատկանշական է, որ դատավարական ընթացակարգերում էական նշանակություն են ստանում հատկապես այն սխալները, որոնք, փորձագիտական եզրակացության գնահատման ընթացքում ուղղակի չնկատվելով քննիչի կամ դատավորի կողմից, սխալ հետևությունների ձևավորման պատճառ են դարձել: Այն դեպքերում, երբ փորձագետի եզրակացությունը հիմք է հանդիսացել այնպիսի դատավարական որոշումների կայացմանը, որոնք գործի համար ունեցել են վճռական նշանակություն (*օրինակ՝ քրեական գործը կարճելու մասին որոշումը, կամ տվյալ գործով դատարանի կողմից կայացվել է դատավճիռ և այլն*), ապա տվյալ փորձագիտական հաստատության ղեկավարը պարտավոր է փորձաքննություն նշանակած համապատասխան մարմնին կամ գործն ըստ էության քննող դատարանին, իսկ եթե կայացվել է համապատասխան դատավճիռ, ապա՝ համապատասխան դատական մարմիններին կամ դատախազությանն իրազեկել հայտնաբերված փորձագիտական սխալի և դրա ունեցած նշանակության մասին:²¹ Տվյալ պարագայում վերը նշված մարմինները, գնահատելով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև փորձագիտական սխալի ունեցած նշանակությունն ու կարևորությունը, պարտավոր են պատշաճ քննարկել հարցը և հնարավորինս սեղմ ժամկետներում հայտնել իրենց դիրքորոշումը գործի քննության հետագա ընթացքի վերաբերյալ:

Այսպիսով, ընդհանրացնելով սույն խնդրի շուրջ ծավալած ուսումնասիրությունները՝ կարելի է բնորոշել «*փորձագիտական սխալներ*» եզրույթի հետևյալ սահմանումը.

«Փորձագիտական սխալները փորձագետի օբյեկտիվ իրականությանը չհամապատասխանող դատողությունների, փորձագիտական հետազոտութ-

²¹ Մանրամասն տե՛ս. **Белкин Р. С.** Криминалистика: проблемы сегодняшнего дня. Злободневные вопросы российской криминалистики. — М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА—ИНФРА • М), 2001, էջեր 171-ից 191:
<http://lib.maupfib.kg/wp-content/uploads/2015/12/kriminalistika.pdf>

յան նպատակին չծառայող, այդ թվում՝ սխալ օբյեկտների և նմուշների հետազոտման, մոտավոր կամ իրականությանը չհամապատասխանող ելակետային տվյալների տրամադրման, ինչպես նաև որոշակի գիտական հիմնավորվածության կարիք ունեցող հատուկ գիտելիքների (մեթոդիկաների) օգտագործման արդյունքում ստացված, սակայն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով բարեխիղճ մոլորության մեջ հայտնվելու արդյունքում ձևավորված ոչ միտումնավոր թերացումների և ոչ ճիշտ պատկերացումների հետևանք են»:

Հարկ ենք համարում նաև նշելու, որ փորձագիտական ոլորտում հանդիպող սխալների և դրանց պատճառների ժամանակին հայտնաբերումն ունի էական նշանակություն՝ դատափորձագիտական ոլորտում իրականացվող աշխատանքների ճիշտ և որակյալ կազմակերպման, ակնկալվող արդյունքների բարելավման, վերլուծման, ինչպես նաև դատական փորձաքննությունների ապացուցողական նշանակության բարձրացման համար: Միանշանակ է, որ այդպիսի սխալների բացառումն ու դրանց ճիշտ արձանագրումն ունի որոշիչ ազդեցություն փորձագիտական եզրակացության նկատմամբ ձևավորված վստահության գնահատման վրա:

Վերջում պետք է միայն փաստել, որ դատական պրակտիկայում նմանատիպ սխալների վերաբերյալ իրականացվող մշտական և հետևողական բնույթի վերլուծությունները որակյալ և անթերի փորձաքննությունների կատարման անվիճելի գրավականն են:

ОШИБКИ В СУДЕБНОЙ ЭКСПЕРТИЗЕ И ИХ ПРИЧИНЫ

Асланян Араик Вардгесович

*Заместитель начальника отдела
криминалистических исследований
Экспертно-криминалистического управления
Полиции РА, подполковник полиции,
кандидат юридических наук*

Эксперт подверг глубокому изучению те ошибки в сфере судебных экспертиз, которые, с точки зрения правовой оценки судебно-экспертного заключения, имеют важное практическое значение. Проанализировав процесс

проведения судебных экспертиз и встречающиеся в них ошибки, автор показал возможные причины их возникновения, а также обсудил ряд вопросов теоретического и правового значения относительно предмета вопроса.

Результаты изучения могут иметь важное значение в деле организации, совершенствования работы в сфере судебной экспертизы, устранения возможных ошибок, а также повышения доказательственного значения судебных экспертиз.

Ключевые слова: судебно-экспертное заключение, экспертные ошибки и причины, специальные знания, эксперт, доказательственное значение.

THE ERRORS IN CRIMINAL PROCEEDINGS AND THEIR REASONS

Arayik Aslanyan

Deputy Head of Subdivision of Criminal

Scientific Researches of the

Expert- Criminal Department of Police

of the RA PhD in Jurisprudence, Police colonel

The expert deeply studied the errors in forensic investigations, which, from the viewpoint of legal assessment of forensic expert report, have important practical meaning. Having analyzed the procedure of conduction of forensic investigations and the errors in them, the author showed possible reasons for their occurrence; he also discussed number of issues of theoretical and legal purpose regarding the subject of the issue.

The studies of the author may have important meaning in organization, improvement of works in forensic investigation, removal of possible errors, as well as increase of evidential significance of forensic investigations.

Key words: Forensic expert report, expert errors and reasons, special knowledge, expert, evidential significance.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.12.2021թ.

Ներկայացվել է տպագրության՝ 14.01.2022թ.

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Բագրատյան Ազատ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
օպերատիվ-հետախուզական գործունեության և
քրեագիտության ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է ոչ միայն հանցավոր արարքների, այլև հանցակազմի հատկանիշներ չպարունակող իրավախախտումները նախագգուշացնելու, կանխելու, խափանելու և բացահայտելու համար¹։ Դրա համար անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում օպերատիվ-հետախուզական գործունեություն հասկացությունը՝ ըստ որի օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են հակաիրավական ոտնձգություններից՝ հանցագործություններ և զանցանքներ², պաշտպանելու նպատակով³։ Նշված դրույթներն իրենց արտահայտությունն են գտնում ՀՀ հարկային օրենսգրքում։ Օրինակ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջների խախտումները հայտնաբերելու համար⁴։ Քրեական պատասխանատվություն սահմանված չէ նաև ՀՀ մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների ապօրինի տեղափոխման համար։

Իհարկե, հանցավորության դեմ պայքարից բացի օպերատիվ-հետախուզական գործունեությունը լուծում է սոցիալական նշանակություն ունե-

¹ Տե՛ս, օրինակ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ կետերը։

² Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն։ Ուսումնական ձեռնարկ / Հեղ. խումբ։ Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. – 2-րդ լրամշակված հրատ. – Եր.։ Լուսաբաց հրատարակչատուն, 2016, էջ 541։

³ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը։

⁴ Տե՛ս ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածը։

ցող այլ խնդիրներ, որոնք ուղղակիորեն կապված չեն այդ պայքարի հետ⁵։ Սակայն օպերատիվ-հետախուզական գործունեությունն առաջին հերթին պաշտպանում է հանցագործություններից։ Այլ իրավախախտումները հանդես են գալիս որպես ներգործության լրացուցիչ օբյեկտներ։ Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունքում կարող են արարքների մասին տեղեկություններ ստացվել, որոնք նախատեսված չեն քրեական օրենքով։ Հանցավորության դեմ պայքարը դրական ազդեցություն է գործում բոլոր իրավախախտումների վրա։ Այնուհանդերձ, անցկացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ի սկզբանե նպատակ ունենալով ուղղակիորեն նախագոյնացնել, կանխել, խափանել և բացահայտել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված խախտումները, չի բխում օպերատիվ-հետախուզական գործունեության էությունից։

Թեպետ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը համալրվում է նոր գիտելիքներով, այնուամենայնիվ, արտահայտվող տեսակետի օգտին է խոսում նաև հետևյալ հանգամանքը. **օպերատիվ-հետախուզական միջոցներ** տերմինն առաջին անգամ գործածվել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Միութենական Հանրապետությունների քրեական դատավարության հիմունքներում, որից հետո՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների քրեական դատավարության օրենսգրքերում⁶։ Համանման դրույթ ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ հետաքննության մարմինը ձեռնարկում է օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցա-

⁵ St' u Atmajitov, B.M. О сущности и правовой основе оперативно-розыскной деятельности (научный доклад) / В.М. Аتماжитов // Конституционно-правовые проблемы оперативно-розыскной деятельности: сб. материалов Всерос. круглого стола (3 нояб. 2011 г.) / сост.: К.Б. Калиновский. СПб.: ИД «Петрополис», 2012, էջ 75:

⁶ St' u Теория оперативно-розыскной деятельности: учебник / под. ред. К. К. Горяинова, В. С. Овчинского. – 4-е изд., перераб. и доп. – М.: ИНФРА-М, 2018. – X, էջեր 5-8, Вытовтов А. Е. Результаты оперативно-розыскной деятельности как средства доказывания в уголовном судопроизводстве (по материалам уголовных дел экономической направленности). Дисс. ... канд. юрид. наук. Иркутск, 2020, էջ 30, <https://omamvd.ru/diss/wp-content/uploads/2020/10/Диссертация- AE- Вытовтова.pdf> (13.01.2022, 20:40), Основы уголовного судопроизводства СССР и союзных республик, 29-րդ հոդված, <https://docs.cntd.ru/document/9006425> (04.01.2022, 19:19):

ռումներ՝ հանցագործությունները և կատարող անձանց բացահայտելու, հանցագործությունները կանխելու և խափանելու նպատակով⁷:

Ինչ վերաբերում է ՀՀ մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների ապօրինի տեղափոխմանը, ապա անհամապատասխանությունն առկա է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթների միջև: Այսպես, ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ մաքսային ծառայությունն օպերատիվ-հետախուզական գործունեություն է իրականացնում մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով, սակայն, ինչպես արդեն նկատեցինք, ՀՀ մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների ապօրինի տեղափոխումը նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքով:

Հակասություններ գոյություն ունեն տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների առումով: Այսպես, ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ օպերատիվ-հետախուզական համապատասխան միջոցառումներն իրականացվում են տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումները կանխելու կամ բացահայտելու համար: Սակայն ներքին դիտումը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, հեռախոսային խոսակցությունների վերահսկումն անցկացվում են միայն դատարանի թույլտվությամբ և միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձանց նկատմամբ⁸, ուստի իրավախախտման փոխարեն պետք է գործածել **հանցագործություն** հասկացությունը:

Անդրադառնանք նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում առկա այլ անճշտություններին: Այսպես, վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը որպես օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակ սահմանելիս անտեսվել են տուժողները: Իրական իմաստից զուրկ է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, քանի որ

⁷ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁸ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը, 34-րդ հոդվածի 1-ին մասը:

օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակը չի կարող լինել հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանը սպառնացող հանգամանքների առկայությունը կամ հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի կողմից օպերատիվ-հետախուզական մարմիններին տրված ցուցումները: Ըստ էության՝ օրենսդիրը ցանկացել է ամրագրել հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանը սպառնացող հանգամանքների վերացումը⁹:

Օպերատիվ-հետախուզական գործունեության որոշ նպատակներ դիտարկվում են հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, կանխման և խափանման լույսի ներքո՝ հանցագործություններ նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց, վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը և այլն: Դրանց առանձին հիշատակումը խախտում է ընդհանուրի և մասի հարաբերակցության սկզբունքը: Որպես օրինակ՝ նկատեմ նաև, որ, ըստ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, քրեակատարողական հիմնարկներում բացակայում են կատարվող և կատարված հանցագործությունները: Նման կարգի անճշտությունները պետք է բացառել միասնական տերմինաբանություն պահպանելու միջոցով: Միևնույն ժամանակ, հանցագործությունների կանխումը, խափանումը և բացահայտումն ինքնին ենթադրում են դրանց հայտնաբերումը, ուստի տվյալ նպատակը կարելի է սահմանել առանց **հայտնաբերում** եզրույթի՝ գործածելով հանցագործության փուլերով¹⁰ պայմանավորված դասակարգումը՝ հանցագործությունների կանխումը, խափանումը և բացահայտումը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից է քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը: Այս-

⁹ Տե՛ս «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը:

¹⁰ Տե՛ս Գալիման Լ. Դ. Квалификация преступлений: закон, теория, практика. 3-е изд., перераб. И дополн. – М.: АО «Центр ЮрИнфоР», 2005, էջեր 171-186, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Ս. Առաքելյան, Ա. Գաբուլյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջեր 240-241:

տեղ նույնպես բացակայում է միասնական տերմինաբանությունը՝ քրեական պատասխանատվությունից խուսափող անձինք ենթակա են հետախուզման և հայտնաբերման, իսկ անհայտ կորած անձինք՝ միայն հետախուզման: Այնուհանդերձ, կարելի է սահմանափակվել հետախուզմամբ, քանի որ վերջինս անցկացվում է անձանց հայտնաբերելու համար: Բացի այդ, չեն ամրագրվել հետախուզական աշխատանքներով ընդգրկված այլ անձինք:

Հետախուզվող անձի հայտնաբերմամբ կարող են պարզվել հանցագործության նոր հանգամանքներ: Միաժամանակ արձանագրենք, որ հետախուզում հայտարարվում է նաև պատժի կրումից խուսափող դատապարտյալի նկատմամբ¹¹, ինչը վկայում է դատավճռով հաստատված անձի մեղավորության մասին: Հետևաբար, տվյալ դեպքում հետախուզումը հանցագործությունների կանխման, խափանման և բացահայտման բաղկացուցիչ մաս չէ: Համանման դիրքորոշում կարելի է արտահայտել անհայտ կորած անձանց, ինչպես նաև այլ կատեգորիաների անձանց համար: Օրինակ՝ անձի անհայտ կորելը դեռ չի խոսում հանցանքի կատարման մասին: Այս ամենը հաշվի առնելով՝ հետախուզական աշխատանքներով սահմանված գործառույթները հանդես են գալիս որպես օպերատիվ-հետախուզական գործունեության ինքնուրույն նպատակ:

Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից է ապօրինի ծագում ունեցող գույքի մասին տեղեկությունների և տվյալների հայտնաբերումը, այդ գույքի բռնագանձման գործընթացին աջակցելը¹²: Այս գործընթացն իրականացվում է գույքի քաղաքացիական բռնագանձման վարույթի շրջանակներում¹³, և տվյալ դեպքում խոսքն այսպես կոչված ստուգողական օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասին է: Հանցագործության հատկանիշների առկայության պայմաններում օպերատիվ-հետախուզական գործունեությունն անցկացվում է ամբողջ ծավալով, իսկ քննարկվող նպատակն ընկալվում է դրանց կանխման, խափանման և բացահայտման տեսանկյունից: Տվյալ դեպքում **բռնագանձումը** քրեաիրավական ներգործության միջոց է: Հանցավոր եղանակով ստացված գույքի հայտնաբերումը

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434¹-րդ հոդվածը:

¹² Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7.1 կետը:

¹³ Տե՛ս «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը:

որոշակիորեն հաստատում է անձի առնչությունը հանցագործությանը: Սակայն այդ գույքի բացակայության դեպքում կարող են միջոցներ ձեռնարկվել համարժեք գույքը պարգևելու ուղղությամբ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են նաև բռնագրավման ենթակա գույքը հայտնաբերելու համար, երբ հատկապես այն գտնվում է այլ երկրում: Հետևապես, օպերատիվ-հետախուզական գործունեության ինքնուրույն նպատակն է բռնագանձման և բռնագրավման ենթակա գույքի հայտնաբերումը:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 10-16-րդ կետերով ամրագրված նպատակները նմանապես նախատեսում են ստուգողական օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացում: Այսպես՝ ոստիկանությունում ծառայության անցնելիս ՀՀ քաղաքացիների անձնական հատկանիշները կարող են ստուգվել օպերատիվ-հետախուզական ճանապարհով,¹⁴ կամ պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին առնչվելու թույլտվության համար ՀՀ քաղաքացիների նկատմամբ անցկացվում են ստուգողական միջոցառումներ¹⁵: Սակայն այդ միջոցառումներն իրականացվում են նաև այլ դեպքերում, որոնք նախատեսված չեն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով, ուստի, կարծում եմ, պետք չէ տարածականորեն թվարկել նշված նպատակները, ինչպես նաև սահմանափակել դրանց ցանկը:

Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակների մասին դրույթներն ամփոփված են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում: Նշված մասի առանձնացումը ենթադրում է հոդվածի այլ մասերի գոյությունը, սակայն վերջիններս բացակայում են: Նման տարանջատման համար հիմք կարող է ծառայել այն հանգամանքը, որ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակների մի մասն անմիջականորեն առնչվում է հանցագործություններին, իսկ մյուսը՝ ենթադրում ստուգողական օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացում:

Այժմ քննարկենք օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների և նպատակների հարաբերակցության հարցը: Խնդիրն այն է, ինչը պա-

¹⁴ Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը:

¹⁵ Տե՛ս «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածները:

հանջում է կատարում, լուծում, իսկ նպատակը՝ ինչի ձգտում և ուզում են հասնել¹⁶: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում ամրագրված չեն օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրները: Փոխարենը մանրամասն սահմանվում են օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները: Սակայն օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացության¹⁷ վերլուծությամբ բացահայտվում է օպերատիվ-հետախուզական գործունեության իրական նպատակը՝ անձի իրավունքներն ու ազատությունները, պետական, հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելը¹⁸: Հիմք ընդունելով այս ամենը՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված նպատակները պետք է դիտարկել խնդիրների տեսանկյունից, քանի որ դրանց լուծումը թույլ է տալիս հասնել օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակին՝ անձի իրավունքներն ու ազատությունները, հասարակական ու պետական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելը:

Գիտության զարգացման հետ մեկտեղ տեղի է ունենում թվացյալ առաջընթաց՝ գիտության արհեստական բարդացում: Նորմատիվ իրավական ակտերը հասարակ և հասկանալի դարձնելու փոխարեն մշտապես բարդացվում են¹⁹, երբեմն՝ համալրվում հակասող դրույթներով²⁰:

Ամփոփելով վերոգրյալը՝ նպատակահարմար ենք համարում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝

¹⁶ Տե՛ս Է. Բ. Աղայան: Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան – 1976, էջեր 586-587, 1083, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24> (05.01.2022, 15:15):

¹⁷ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

¹⁸ Օպերատիվ-հետախուզական գործունեության պաշտպանության տակ գտնվող օբյեկտները պետք է թվարկել՝ առաջնորդվելով մասնավորից դեպի ընդհանուր կատեգորիաներ սկզբունքով՝ անձ, հասարակություն, պետություն:

¹⁹ Տե՛ս Оперативно-розыскная деятельность в XXI веке: монография / С. И. Захарцев, Ю. Ю. Игнащенко, В. П. Сальников. – М.: Норма, 2015, էջ 127:

²⁰ Տե՛ս «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին 16.04.2020 թ. № ՀՕ-250-Ն ՀՀ օրենքը, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին 03.03.2021 թ. № ՀՕ-90-Ն ՀՀ օրենքը:

Հոդված 4. Օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրները

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրներն են՝

ա. հանցագործությունների կանխումը, խափանումը և բացահայտումը.

բ. քրեական պատասխանատվությունից խուսափող, անհայտ կորած անձանց հետախուզումը, ինչպես նաև հետախուզական աշխատանքներով նախատեսված այլ գործողությունների իրականացումը.

գ. բռնագանձման և բռնագրավման ենթակա գույքի հայտնաբերումը:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրներն են նաև՝

ա) պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների և առնչվելու թույլտվության որոշման կայացման համար տեղեկություններ հավաքելը.

բ) ազգային անվտանգության ծառայությունում, ոստիկանությունում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում այլ պետական մարմիններում աշխատանքի անցնելու դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելը.

գ) օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ քաղաքացիություն, ՀՀ քաղաքական ապաստան կամ կացության կարգավիճակ տալու մասին եզրակացություն կազմելու և որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունն անցկացվում է նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

ОТДЕЛЬНЫЕ АСПЕКТЫ ЗАДАЧ И ЦЕЛЕЙ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Багратян Азат Людвигович

Преподаватель кафедры оперативно-розыскной

деятельности и криминалистики Академии

Образовательного комплекса полиции РА,

майор полиции, кандидат юридических наук

В статье обсуждаются вопросы, касающиеся задач и целей оперативно-розыскной деятельности, рассматривается соотношение указанных понятий.

Вместе с тем автором обосновывается необходимость сделать Закон Республики Армения «Об оперативно-розыскной деятельности» более ясным и простым, предлагается внести изменения в соответствующий закон.

Ключевые слова: задачи оперативно-розыскной деятельности, цели оперативно-розыскной деятельности, предупреждение, пресечение и раскрытие преступлений, розыск.

SEPARATE ASPECTS OF PROBLEMS AND OBJECTIVES OF OPERATIVE-SEARCH ACTIVITIES

Bagratyan Azat

*Lecturer at the Chair of Operational
Intelligence Activity and Criminology
at the Academy of the Educational
Complex of Police of the RA,
Police major, PhD in Law*

This work discusses the main objectives and problems of the operative-search activity and also refers to the correlation between them. Simultaneously, justifications are proposed in order to clarify and simplify the law on “Operative-Search Activity” of the Republic of Armenia. Given this, relevant amendments are proposed to the above-mentioned law.

Key words: operative-search activity problems; operative-search activity objectives; prevention, obstruction and detection of crimes; operative-search.

Հոդվածը գրախոսվել է՝ 13.01.2022թ.
Ներկայացվել է տպագրության՝ 17.01.2022թ.

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մարգարյան Հայկ

ՀՀ ռստիկանության ՀՀ-ում Բնտերպոլի

ԱԿԲ-ի ավագ օպերլիազոր, ՀՀ ռստիկանության

կրթահամալիրի ասպիրանտ

Արդի ժամանակաշրջանում պետականաշինության ամուր իրավական հիմքեր ունենալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել կոնկրետ հասարակական հարաբերությունները կարգավորող ոլորտային իրավունքի ճյուղերի պատմական զարգացումը: Այս առումով բացառություն չեն նաև հեղինակային և հարակից իրավունքները: Ոլորտային իրավունքի պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բազմաշերտ պատկերացում կազմել իրավունքի ճյուղի առջև ժամանակի ընթացքում ծառացած խնդիրների և դրանց լուծումների մասին, ինչի արդյունքում իրավունքի ճյուղի զարգացումը բերում է նոր և արդիական մոտեցումների, ինչպես նաև հնարավորություն է տալիս կանխատեսել ապագա միտումները:

Այսպես, գրականության և արվեստի ծագող հարաբերություններում հեղինակային և հարակից իրավունքները կարգավորող անտիկ շրջանի իրավունքի աղբյուրներ այսօր հայտնի չեն: Պետք է հաշվի առնել, որ տեխնոլոգիական իրավիճակից ելնելով՝ հին դարերում գրականության և արվեստի գործերի պատճենումը բավականին բարդ գործընթաց էր, քանի որ դա պետք է կատարվեր ձեռքի աշխատանքի արդյունքում, այսինքն՝ ձեռագրերի արտագրությամբ: Հասկանալի է, որ դա ժամանակատար գործընթաց է, բացի այդ, խնդիր կար գրագիտություն ունեցող անձանց ներգրավելու, ինչի արդյունքում առաջ էր եկել նման գործընթացն իրականացնելու նոր պահանջարկ, որը համարվում էր վարձու աշխատանք: Սակայն այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նյութական օգուտ քաղում էր կրկնօրինակման հեղինակը, այլ ոչ թե բուն աշխատության հեղինակը: Արվեստի և գրականության ներկայացուցիչները հիմնականում եկամուտ ստանում էին կա՛մ մասնավոր պարապմունքներից, կա՛մ հովանավորներից ու պատվիրատուներից՝ կոնկրետ կատարած աշխատանքների դիմաց, սա-

կայն այն համարվում էր պատվիրատուի սեփականությունը, և պատվերը հանձնելուց հետո դրան առնչվող ցանկացած գույքային իրավունք պատկանում էր պատվիրատուին:

Այս իմաստով Ի.Ա.Պոկրովսկին նշում էր, որ Հին Հռոմում ուրիշին պատկանող առարկայի վրա գրված կամ նկարված պոեմը կամ նկարը պատկանում էր ոչ թե պոետին կամ նկարչին, այլ տվյալ առարկայի սեփականատիրոջը: Հուստինիանոսի օրոք այս նորմը վերացվում է, սակայն Հուստինիանոսի աշխատություններում ևս հեղինակային իրավունքի մասին որևէ հիշատակում առկա չէ:¹

Այսինքն, ըստ էության, հեղինակային իրավունքի պահպանում կամ ոլորտի կարգավորում դեռևս առկա չէ, ինչի մասին է վկայում նաև Գ.Ֆ.Շերշենիչը, ում պնդմամբ՝ հեղինակներն իրենք էլ որևէ հստակ պատկերացում չունեին հեղինակային իրավունքի մասին²:

Սակայն միաժամանակ պետք է փաստել, որ կան անտիկ աշխատություններ, որոնցում հեղինակային իրավունքի նշույլներ ամեն դեպքում ի հայտ են գալիս: Մասնավորապես, Ի.Ա.Բլիզնեցի և Կ.Բ.Լեոնտևի «Հեղինակային և հարակից իրավունքները» վերտառությամբ դասագրքում, հղում կատարելով Ֆեդոտովին, նշվում է, որ պետական Էրմիտաժում կա հին հունական սափոր, որի վրա թվագրված է մ.թ.ա. 500թ.: Սափորի վրա գրված է. «Գեսիսիլը պատրաստեց, իսկ Էպիկտետը նկարագարեց»:³ Այս փաստը Ֆեդոտովի մեկնաբանմամբ կարելի է համարել համահեղինակության ամրագրում: Ըստ վերջինի՝ հեղինակային իրավունքի ամրագրման հիմքերը հանդիպում են դեռևս հնագույն ժամանակներում, քանի որ ստեղծագործ մարդուն մշտապես բնութագրական է եղել իր ստեղծագործության նկատմամբ սեփական հեղինակության պաշտպանությունը: Այսինքն՝ հին ժամանակներում դա ոչ այնքան նյութական արժեք էր կրում, քան բարոյական, քանի որ ստեղծագործողն առավելապես կարևորում էր սեփական համբավը:

¹ Ст'ю Покровский И.А. «Основные проблемы гражданского права», Москва, «Статут», 2001թ., էջ՝ 83:

² Ст'ю Шершеневич Г.Ф. Авторское право на литературные произведения. Казань, 1891, докторская диссертация, էջ՝ 76:

³ Ст'ю Близнец И.А., Леонтьев К.Б. «Авторское право и смежные права, учебник», Москва, издательство «Проспект», 2010թ., էջ՝ 3:

Վ.Վեյնկեի պնդմամբ՝ այլոց ստեղծագործության հեղինակության յուրացումը դեռևս հին ժամանակներում դիտվում էր բարոյապես դատապարտելի, իսկ ստեղծագործությունների աղավաղումը հանրային դատապարտման էր ենթարկվում անտիկ Հունաստանում և Հռոմում, ավելի վաղ ժամանակահատվածում՝ նաև Հնդկաստանում:⁴

Այստեղից կարելի է հետևություն անել, որ ընդհանուր բարոյական վերաբերմունքի տեսանկյունից հեղինակային և հարակից իրավունքների գոյությունն անտիկ ժամանակներում եղել է, սակայն դա չի ունեցել իրավական կարգավորում և ամրագրում: Ինչպես նշել է Ս.Ա.Սուդարիկովը. «Իրականում հեղինակային իրավունքը՝ որպես էթիկական կատեգորիա և նույնիսկ պրակտիկա, գոյություն ունի հազարամյակներ, իսկ հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքներն սկսեցին ձևանշվել գրերի առաջացման հետ մեկտեղ»:⁵

Վերոգրյալի համադրության արդյունքում կարող ենք հանգել այն եզրակացության, որ անտիկ դարաշրջանում հեղինակային իրավունքն ինքնին եղել է առավելապես հանրային տիրույթում, դրսևորվել է մեծամասամբ անձնական ոչ գույքային իրավունքների համատեքստում, ինչը միայն արտաքինապես է հիշեցնում ներկայիս հեղինակային իրավունքների իրավական կանոնակարգումը, ամրագրումն ու պաշտպանությունը: Խնդիրը, կարծում եմ, այդ ժամանակաշրջանի բարբերով է պայմանավորված, քանի որ հնում արվեստագետներն ու գիտնականներն առավելապես զարգացնում էին կոնկրետ արվեստի կամ գրականության ճյուղը և նշվածին մոտենում էին փիլիսոփայական տեսանկյունից, քանզի շուկայական հարաբերությունները բավականաչափ չէին ներգրավվել առօրյա կյանքում: Բացի այդ, այդ ժամանակահատվածում հեղինակներն իրենց ստեղծագործությունների նկատմամբ ունեին սահմանափակ իրավունքներ, ինչի արդյունքում սեփական իրավունքների արդյունավետ պաշտպանության մասին խոսելը ժամանակավրեպ ու տեղին չի լինի:

⁴ St' u V.Veinke «Intellectual Property Law: Origin and Development as an Institute of Constitutional-Legal Regulation» Copyright. Regulation, fundamentals, future, Moscow, 1979թ., էջ՝ 15, հղումը՝ <https://lawbook.online/prava-istoriya/avtorskoe-pravo-reglamentatsiya-osnovyi.html> վերջին դիտումը՝ 10.01.2022:

⁵ St' u Судариков С.А. «Основы авторского права», Минск, Издательство «Амалфея», 2000թ., էջ՝ 27:

Պետք է փաստել, որ հեղինակային և հարակից իրավունքների լայնամասշտաբ զարգացումն սկսվեց 15-րդ դարից: Դա պայմանավորված էր գիտական և արվեստի ճյուղերի համեմատաբար առավել մասսայականացմամբ, գրագիտությամբ և նշված ճյուղերի հանդեպ հանրային հետաքրքրության բարձրացմամբ: Արդյունքում, երբ մոտավորապես 1450թ. Ոսկերիչ Յոհաննես Գուտենբերգն ստեղծեց տպագրական մեքենան, պահանջարկ վայելող գիտական և արվեստի ստեղծագործությունների տարածումը դարձավ անխուսափելի, և դրանց ինքնակամ արտատպումը կամ պատճենումը (կոնտրաֆակցիան) լայն թափ ստացավ, քանի որ այն բավականաչափ եկամտաբեր էր: Գույքային մեծ օգուտներ ստանալու պատճառով տպված գրքերի պահանջարկը գնալով մեծացավ՝ հնարավորություն տալով զբաղվել այլոց ստեղծագործությունների արտատպմամբ, հաշվի չառնելով ստեղծագործողի շահերը:⁶

Հեղինակային իրավունքի ծագման ակունքները եվրոպական պետություններում սկսեցին զարգանալ այն բանի համար, որպեսզի պետությունն ու եկեղեցին կարողանան կանոնակարգել և վերահսկել տպագրության արգասիքները: Նախքան տպագրության ստեղծումը պատճենների տարածումը կատարվում էր ձեռագիր տարբերակով, որը շատ աշխատատար էր և սխալներով արտատպվելու հակում ուներ: Այդ գործընթացն իրականացնում էին դպիրները, իսկ գրաքննության և վերահսկողության մշակված համակարգ գոյություն չուներ, քանի որ նրանք ցրված էին և աշխատում էին առանձին ձեռագրերի վրա:

Թեև իշխանությունները և եկեղեցին խրախուսում էին տպագրությունը շատ առումներով, ինչը թույլ էր տալիս Աստվածաշնչի և կառավարական տեղեկատվության տարածումը, այլախոհության և քննադատության ստեղծագործությունները նույնպես կարող էին արագ շրջանառվել: Որպես հետևանք՝ իշխանությունները հսկողություն սահմանեցին ամբողջ Եվրոպայում տպողների նկատմամբ՝ պահանջելով նրանցից պաշտոնական արտոնագրեր ունենալ առևտրի և գրքեր արտադրելու համար: Լիցենզիաները, որպես

⁶ St' u Алехина Л.А., «Генезис категорий «интеллектуальная собственность» и «исключительные права» в теории права XVIII – начала XX вв: теоретико-правовые и историко-правовые аспекты, диссертация, Санкт-Петербургский государственный инженерно-экономический университет, кафедра гражданского права, Санкт-Петербург, 2006թ., էջ՝ 93–94:

կանոն, տպողներին տալիս էին որոշակի գործեր տպելու բացառիկ իրավունքը որոշակի ժամկետով, և իրավունք էր վերապահվում տպագրողին թույլ չտալ մյուսներին նույն աշխատանքը տպել այդ ժամանակահատվածում: Լիցենզիաները կարող էին տալ միայն տպագրության իրավունքներ այն պետության տարածքում, որը տրամադրել էր դրանք, սակայն արտասահմանյան տպագրության ներմուծումն արգելվում էր:⁷

Մինչ ստեղծագործությունների հեղինակների շահերը մնում էին իրավական և գործնական պաշտպանությունից դուրս, այս տեսակ պատճենումները գործնականում համարվում էին հրատարակիչների և գրքավաճառների շահերի խախտումներ, ովքեր էլ ի վերջո բողոքի ալիք բարձրացրին, ինչի արդյունքում առաջ եկավ «Արտոնություն» (անգլերեն՝ *privilege, license*) տրամադրելու եզրույթը, որը լայն տարածում ստացավ մի շարք երկրներում: Այն առանձին անձանց որոշակի ժամկետով այս կամ այն ստեղծագործությունը հրատարակելու և վաճառելու բացառիկ իրավունքի վերապահում էր: Առաջին «Իրավունքը» (*license*) կամ «արտոնությունը» (*privilege*) տրվել էր Վենետիկի Հանրապետության կողմից 1486թ. Մարկուս Անտոնիուս Սաբելլիցուսի (*Marcus Antonius Coccius Sabellicus*) «*Rerum venetarum ab urbe condita opus*» աշխատության համար, որն ինքնին Վենետիկ քաղաքի պատմությունն էր⁸: Այնուամենայնիվ, ստեղծագործությունների հեղինակներն այստեղ ունեին շատ չնչին եկամուտ, սակայն ստեղծագործության նկատմամբ իրենց բոլոր իրավունքները փոխանցում էին հրատարակիչներին, ում էլ հենց տրվում էին տպագիր արտադրանք ստեղծելու և տարածելու արտոնություններն ինչպես որոշակի ժամկետով, այնպես էլ՝ անժամկետ (հիմնականում գերակշռում էին երկու տարի ժամկետով տրամադրվող արտոնությունները):⁹

Նշված արտոնություններն, ըստ էության, բնույթով չեն կարող համարվել իրավունք վերապահող, քանի որ չկար հավասարություն երկու սուբյեկտների միջև (ստեղծագործության հեղինակ և տպագրիչ), ուստի շեշտել,

⁷ Hector L. MacQueen, Charlotte Waelde, Graeme T. Laurie, *Contemporary Intellectual Property: Law and Policy*, Oxford University Press, 2007թ., էջ՝ 34:

⁸ Armstrong, Elizabeth. *Before Copyright: the French book-privilege system 1498–1526*. Cambridge University Press, Cambridge: 1990թ., էջ՝ 3:

⁹ Ст'ю Кашанин А.В. «О проблеме распоряжения личными неимущественными правами автора», Институт правовых исследований государственного университета, Высшая школа экономики, 2012թ., <https://refdb.ru/look/1985329-pall.html>, վերջին դիտում՝ 14.01.2022:

որ հեղինակային իրավունքն այդ ժամանակ «բացառիկ իրավունք» էր գոնե իր բնույթով, այնքան էլ իրավացի չէ: «Բացառիկ իրավունք» ասելով՝ պետք է հասկանալ մտավոր գործունեության արդյունքի նկատմամբ ունեցած իրավունք (մտավոր սեփականություն), ինչի շնորհիվ հեղինակն այն օգտագործելու իրավունք է ձեռք բերում: Այս իրավունքն իր բնույթով բացառիկ է և միայն հեղինակի կամ նրա իրավահաջորդի թույլտվությամբ կարող է փոխանցվել այլ անձանց: Բացի այդ, հեղինակն ունի այնպիսի ոչ գույքային իրավունքների ամբողջություն, ինչպիսիք են հեղինակային իրավունքը, հեղինակի անվան նկատմամբ իրավունքը, հրապարակման, տպագրման իրավունքները: Իրավունքի «բացառիկ» լինելու էությունն այն է, որ միայն իրավատերը (հեղինակը և նրա իրավահաջորդը) իրավունք ունի օգտագործելու հեղինակային ստեղծագործությունները, քանի որ այս իրավունքը պատկանում է միայն իրեն՝ սեփականատիրոջը (իրավատիրոջը):¹⁰

Ֆրանսիայում Տպագրական արտոնությունների ոլորտը կանոնակարգող օրենք առաջին անգամ ընդունվեց 1647թ., որն այնուհետև հաստատվեց 1723թ. կանոնադրությամբ, որի նպատակն էր ցենզուրայի ենթարկել եկեղեցու և պետության համար ոչ ցանկալի տպագրման ենթակա ստեղծագործությունները: Ճիշտ այդ նույն նպատակով Անգլիայում 1566թ. հիմնադրվում է «Stationers» հատուկ կազմակերպությունը՝ բաղկացած գրավաճառներից և տպագրողներից, ում էլ հենց տրվում էր տպագրության/պատճենելու բացառիկ իրավունք: Այսինքն՝ զիրք տպագրելու/պատճենելու ցանկություն ունեցող ցանկացած ոք պարտավոր էր այն գրանցել կազմակերպության հատուկ ռեեստրում և ստանալ գրավոր թույլտվություն տպագրության համար:¹¹ Հետագայում՝ 1694թ., Անգլիայում ցենզուրայի նմանատիպ մոտեցումը վերացվեց, ինչի արդյունքում վերացավ նաև արտոնությունների համակարգը, որով էլ գեղարվեստական ստեղծագործությունների օգտագործումը կարգավորվող հարաբերություններն ստացան նոր բնույթ: Սա հիմք դարձավ Անգլո-սաքսոնական իրավունքում հեղինակային իրավունքի առաջին նորմատիվ ակտի/ստատուտի ընդունման համար, որն էլ հենց հա-

¹⁰ St' u Рабец А.М., «Исключительные права на произведения изобразительного искусства в системе имущественных правоотношений супругов», Вестник ТеГУ, Серия, «Право», No. 3, Российский Государственный социальный университет, г. Москва, 2015թ., էջ՝ 88-89:

¹¹ St' u Спасович В.Д. «Права авторские и контрафакция» Петербург: изд. О. Вольфа, Москва, 1865, с.106 С.4:

մարվում է 1710թ. Մեծ Բրիտանիայի Պառլամենտի կողմից ընդունված «The British Statute of Anne 1710» կամ «The Copyright act 1710», (լրիվ անվանումն է «An Act for the Encouragement of Learning, by vesting the Copies of Printed Books in the Authors or purchasers of such Copies, during the Times therein mentioned»)¹²: Այս անվանումից երևում է, որ սկզբնական շրջանում հեղինակային իրավունքը վերաբերում էր միայն գրքեր պատճենելուն, սակայն ժամանակի ընթացքում այն սկսեց ներառել ստեղծագործությունների առավել մեծ շրջանակ: Անգլիայում հեղինակային իրավունքներն ունեին գույքային, տնտեսական բովանդակություն և կապված չէին հեղինակի անձի հետ: Ստեղծագործությունը գույքային բարիք էր համարվում, որի ստեղծման համար արվել են որոշ ներդրումներ, իսկ նախատեսված իրավունքները պետք է համապատասխանաբար իրավատիրոջն ապահովեին ներդրված գումարի վերադարձի և եկամտի ստացման հնարավորությունը:¹³

Ռոմանո-գերմանական իրավունքի երկրների շարքում առաջին նորմատիվ իրավական ակտը եղել է Ֆրանսիայի հիմնադիր խորհրդարանի կողմից 13.01.1791թ. ընդունված «Հեղինակի իրավունքի իրավական ճանաչման մասին» օրենքը (*la reconnaissance légale du droit d'auteur*), որը հեղինակներին և նրանց իրավունքները պաշտպանող առաջին օրենքն է: Հետագայում հեղինակային իրավունքն իր բնական զարգացումն է ապրել ոչ միայն նշված երկու երկրներում, այլ նաև ամբողջ աշխարհում, և ներկայումս հեղինակային իրավունքի առարկա են ինչպես գրքերը, երաժշտությունը, նկարները, քանդակները և ֆիլմերը, այնպես էլ՝ համակարգչային ծրագրերը, տվյալների պահոցները, գովազդը, քարտեզները և համակարգչային նկարազարդումները, սակայն հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, հեղինակային իրավունքի սահմանման միասնական մոտեցում այդպես էլ չի որդեգրվել:¹⁴

Ամերիկյան հեղինակային իրավունքի՝ «copyright»-ի հիմքը համարվում է ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրության 8-րդ բաժնի առաջին հոդվածի 8-

¹² Տե՛ս, Statute of Anne, հղում՝ https://en.wikipedia.org/wiki/Statute_of_Anne, վերջին դիտում՝ 12.01.2022:

¹³ Տե՛ս Антимонов Б.С. «Авторское право», Москва, издательство «Юридическая литература», 1957թ., էջ՝ 21:

¹⁴ Տե՛ս Մարգարյան Հ.Վ., «Հեղինակային և հարակից իրավունքները խախտելու հանցատեսակի ընդհանուր քրեաիրավական բնութագիրը», ք.Երևան, «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2021թ., էջ՝ 89-90:

րդ կետը՝ համաձայն որի. «Կոնգրեսն իրավասու է խրախուսել գիտության և արվեստի զարգացումը՝ որոշակի ժամկետով օժտելով հեղինակներին և գյուտարարներին իրենց ստեղծագործությունների նկատմամբ բացառիկ իրավունքներով»: Հենց այս դրույթի հիման վրա էլ ԱՄՆ Գերագույն դատարանն ընդունեց որոշումներ՝ ձևակերպելով «copyright»-ի հիմնական սկզբունքները: 1790թ. ընդունվեց ԱՄՆ հեղինակային իրավունքի մասին (Copyright act) օրենքը: Իր բնույթով Ամերիկյան հեղինակային իրավունքը կրկնօրինակումն արգելող օրենք էր:¹⁵

Հետխորհրդային պետություններից Ռուսաստանում ևս հեղինակային իրավունքի զարգացման սկիզբը գրքերի տպագրությունը խրախուսելու նպատակով արտոնությունների տրամադրումն էր: Առաջին անգամ 1828թ. հեղինակային իրավունքն ստացավ օրենսդրական ամրագրում «Գրաքննական կանոնադրությունը» նորմատիվ իրավական ակտում (կանոնադրության 135-139 հոդվածներ), որի նորմերն սկզբում պաշտպանում էին ոչ թե ստեղծագործությունների հեղինակների, այլ հրատարակիչների շահերը: Վերոգրյալի կապակցությամբ հետագայում նոր օրենսդրական կարգավորումներ իրականացնելու անհրաժեշտություն առաջացավ, ինչն էլ տեղի ունեցավ 1830թ. և 1857թ.:¹⁶ Այնուհետև՝ 20.03.1920թ., ընդունվում է հեղինակային իրավունքի մասին օրենք, որը մանրամասն կարգավորում էր հեղինակային իրավունքին առնչվող հարաբերությունները: Նշված օրենքի համաձայն՝ հրատարակչին արգելվում էր առանց հեղինակի համաձայնության ստեղծագործության մեջ կատարել լրացումներ, փոփոխություններ և կրճատումներ՝ բացառությամբ այնպիսի փոփոխությունների, որոնք պայմանավորված են ակնհայտ անհրաժեշտությամբ, և որոնց հետ հեղինակը, որպես բարի կամքի դրսևորում, չէր կարող չհամաձայնել:¹⁷

Հայաստանում հեղինակային իրավունքի պաշտպանության ոլորտում առաջին իրավական փաստաթուղթը ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիսարիատի խորհրդի «Հեղինակի իրավունքնե-

¹⁵ Ст'ю Антимонов Б.С. «Авторское право», Москва, издательство «Юридическая литература», 1957թ., էջ՝ 22:

¹⁶ Ст'ю Табашников И.Г. Литературная, музыкальная и художественная собственность. Петербург, 1878, էջ՝ 344-351:

¹⁷ Ст'ю Антимонов Б.С. «Авторское право», Москва, издательство «Юридическая литература», 1957թ., էջ՝ 23:

րի կանոնադրությունն» է, որը հետագայում ենթարկվեց մի շարք փոփոխությունների և, ի վերջո, ներառվեց ՀՍՄՀ 1964թ. ընդունված քաղաքացիական օրենսգրքի «Հեղինակային իրավունք» բաժնում:¹⁸

Այս առումով նորանկախ Հայաստանի պատմության մեջ հեղինակային և հարակից իրավունքների ոլորտը կանոնակարգող օրենսդրական կարգավորումների մեջ կենտրոնական և հիմնաքարային դեր ունի ՀՀ Սահմանադրությունը, որի 43-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն: Այսինքն՝ այս իրավունքն ունի հատուկ սահմանադրական ամրագրում, ինչն արդեն իսկ խոսում է վերջինիս՝ մարդու հիմնարար իրավունքներին պատկանելու մասին: Միաժամանակ պետք է փաստել, որ ՀՀ օրենսդրական պրակտիկայում հեղինակային և հարակից իրավունքների ոլորտը կանոնակարգող առաջին օրենսդրական ակտը 1996թ. ընդունված «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենքն է, որն ուժը կորցրեց 22.07.2006թ.:¹⁹ Իսկ 15.06.2006թ. ընդունվեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» նոր օրենք, որն ավելի մանրամասն է կարգավորում քննարկվող ոլորտին առնչվող իրավահարաբերությունները և ընդգրկում է Գրական և գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիայի, Եվրամիության հեղինակային և հարակից իրավունքներին առնչվող դիրեկտիվների և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության 1996թ. Ինտերնետային պայմանագրերի հիմնական դրույթները: Այն պայմանավորված էր մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրով (TRIPS) սահմանված պարտավորությունների կատարմամբ և ապահովեց Հայաստանի անդամակցությունը Գրական և գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիային:²⁰

¹⁸Տե՛ս Айкянц А.М., История развития частного права в Армении, монография, Ереван, издательство: «Асогик», 250 страниц, 2006թ., էջ՝ 163-164:

¹⁹ Տե՛ս «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված՝ Ազգային ժողովի կողմից, 08.12.1999թ., ուժը կորցրել է 22.07.2006, համարը՝ ՀՕ 28:

²⁰ Տե՛ս World Intellectual Property Organization, «Bern notification No. 219, Accession by the Republic of Armenia», accession: 19.07.2000, on the basis of Paris act of Berne Convention, 1971, entried into force: 19.10.2000, https://www.wipo.int/treaties/en/remarks.jsp?cnty_id=907C, վերջին դիտում՝ 14.02.2022:

ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ АВТОРСКИХ И СМЕЖНЫХ ПРАВ

Маргарян Айк Врежевич

Старший оперуполномоченный НЦБ Интерпола

Полиции Республики Армения, аспирант

Образовательного комплекса полиции РА

Авторское право и смежные права - это права, возникающие в результате творческой работы человека, как итог получения этих результатов, так и с момента их использования. Указанные правовые отношения регулируются и охраняются международными договорами, ратифицированными Республикой Армения и национальным законодательством. В данной статье представлены: историческое развитие авторского права и смежных прав, источники данной подотрасли права в разные периоды и в разных государствах, а также история регулирования общественных отношений в данной сфере, на основании которых сформировалась система правового регулирования указанной сферы.

Ключевые слова: авторское право, смежные права, произведение искусства, автор, источник права, привилегия, историческое развитие.

HISTORICAL DEVELOPMENT OF COPYRIGHT AND RELATED RIGHTS

Margaryan Hayk

Senior Detective of the Interpol NCB

of the Police of the RA, PhD Student

at the Educational Complex of Police of the RA

Copyright and Related rights are the rights arising from the result of a person's creative work, which arise both from the creation of those results and from the moment of their use. The mentioned legal relations are regulated and protected by international treaties ratified by the Republic of Armenia and domestic legislation. This article presents the historical development of copyright and related rights, the sources of this sub-branch of law in different periods and in

different states, the regulation of public relations in this area, on the basis of which the system of legal regulation of this area was formed.

Key words: Copyright, related rights, work of art, author, source of rights, privilege, historical development.

Հոդվածը գրախոսվել է՝ 31.01.2022թ.

Ներկայացվել է տպագրության՝ 14.02.2022թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՈՉ ՄԱՔՍԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Նալբանդյան Անահիտ

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

Ոչ մաքսային խոչընդոտները քաղաքական մարտահրավերներով են մշտապես ներկայացրել բազմակողմանի առևտրային համակարգը: Դրանք սահմանափակող և արգելող միջոցառումների համալիր են, որոնք խոչընդոտում են ազատ առևտրի իրականացմանը: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպես համոզվել, որ ոչ մաքսային խոչընդոտները չեն սահմանափակում կամ խեղաթյուրում առևտուրը, և, միևնույն ժամանակ, համոզված լինել, որ նրանք պետությունների համար կարող են լինել անհրաժեշտ և օրինական քաղաքական նպատակներ: Չնայած քաղաքականության մարտահրավերները մնացել են նույնը, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում զարգացել են առանձնահատուկ հարցեր, բանավեճեր ու լուծումներ: Վաղ շրջանում ոչ մաքսային խոչընդոտները հիմնականում կենտրոնանում էին վճարների հավասարակշռության, զբաղվածության և զարգացման հիմնախնդիրների վրա, իսկ վերջին շրջանում, խոչընդոտների աճող թվի հետ մեկտեղ, կենտրոնացումն ուղղված է տեխնիկական, առողջապահական կամ բնապահպանական մտահոգություններին: Թեև վաղ շրջանում ոչ մաքսային խոչընդոտներն արտադրողների շահերի կողմից են ազդեցություն կրել, այժմյան խոչընդոտներն արտացոլում են պետական քաղաքականության խնդիրների, այդ թվում՝ սպառողների շահերի բազմազանությունը:¹

Տեխնիկական խոչընդոտները վերահսկողության և սահմանափակումների պետական միջոցառումներ են, որոնք կապված են արտադրանքի տեխնիկական պահանջների հետ: Դրանք կիրառվում են դեպի ներքին շուկա օտարերկրյա արտադրանքի նկատմամբ որպես սահմանափակման միջոց: Շատ դեպքերում դժվար է տարբերակել տեխնիկական կանոնակարգերի և ազգային տեխնիկական նորմերի կիրառումը որպես հովանավորչությո-

¹ St' u Trade and public policies: A closer look at non-tariff measures in the 21st century; World Trade Report 2012; էջ 39:

յան միջոց: Օրինակ՝ հնարավոր է, որ տեխնիկական պահանջները խստանան կամ փոփոխվեն ամեն անգամ, երբ աճում է օտարերկրյա ապրանքների մրցակցությունը: Միևնույն ժամանակ, այդ փոփոխությունները շատ քիչ են ազդում ներքին արտադրության վրա՝ ի տարբերություն ներկրված ապրանքների: Տեխնիկական խոչընդոտները տարբեր են թե՛ իրենց բնույթով և թե՛ իրենց ձևով: Դրանց տակ կարելի է հասկանալ ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը, նորմերը, ապրանքների անվտանգության պահանջները, մուտքի վարչական հետաձգումները, նախնական մաքսային ստուգումները, ինչպես նաև արտոնագրման ընթացակարգերը:²

Տեխնիկական կանոնակարգ (technical regulation) ասելով հասկանում ենք ապրանքի ընթացակարգի, արտադրության, պիտակավորման, փաթեթավորման, արտադրական ընթացքին վերաբերող ցանկացած կարգավորում, որը պարտադիր է տնտեսվարող սուբյեկտի համար: Կանոնակարգերի միջոցով պետություններն իրենք են որոշում, թե որ ապրանքն ինչ ընթացակարգով կարող է կարգավորվել, որի արդյունքում էլ ներմուծումը կարող է սահմանափակվել: Օրինակ՝ պետությունը կարող է ասել, որ այս ապրանքի պիտակն ավելի մեծ է, քան իր մոտ ընդունված է, և դրանով իսկ սահմանափակել ներմուծումը դեպի երկիր: Այսինքն՝ ավելորդ ծախսեր է սահմանում երկրի համար, այլ ոչ թե արգելում է ապրանքի մուտքը կամ մաքսատուրք է դնում: Ի տարբերություն կանոնակարգերի՝ ստանդարտները (standards) տնտեսվարող սուբյեկտի համար ունեն կամավոր բնույթ, սակայն դրանք պետք է համապատասխանեն միջազգայնորեն ճանաչված ստանդարտներին, որով էլ ապրանքն սպառողի համար ավելի վստահելի է դառնում: Ստանդարտները ներկայացվում են մի քանի ձևերով, որոնցից են ժամկետների սահմանում, կառուցվածքի դասակարգում, ընթացակարգային մանրամասներ, արտադրողական չափանիշներ և այլն: Այսինքն՝ միջազգային ստանդարտները հիմք են հանդիսանում միջազգային կանոնակարգերի համար՝ բացառությամբ այն դեպքերի, որոնց դեպքում պետությունը չունի իրավական շահ՝ կլիմայական, աշխարհագրական գործոնների, ինչպես նաև տեխնոլոգիական խնդիրների պատճառով:³ Արտոնագրման դեպքում (license) պե-

² St' u Технические барьеры в торговле; Статья:

http://www.ved.gov.ru/mdb/restrictive_measures/technical_barriers/

³ St' u International Trade Center- Difference Between Standards and Technical Regulations; Article;

<http://www.intracen.org/Part-3-Difference-between-standards-and-technical-regulations/>

ստությունը նույնպես կարող է սահմանափակել իր շուկան: Դա ապրանքների արտահանման կամ ներմուծման թույլտվություն է և կարող է տրամադրվել յուրաքանչյուր ապրանքատեսակի, ապրանքի միավորի, ապրանքների խմբաքանակի համար: Արտոնագրումը կարող է ունենալ բազմաթիվ նպատակներ՝ ներառելով առևտրի սահմանափակում, ինչպես նաև վիճակագրական տվյալների հավաքագրում: Դրանք սովորաբար կիրառվում են որպես կառավարող բաժնեչափեր:⁴ Եթե պետությունն ունի արտոնագրման հատուկ ընթացակարգ, այն չպետք է ավելորդ ծանրաբեռնող դարձնի տնտեսվարող սուբյեկտի համար: Պետք է հնարավորինս մեկ պատուհանի միջոցով իրականանա,⁵ որպեսզի «չպարտադրի» տնտեսվարող սուբյեկտին ժամանակ ծախսել հավաստագիր կամ արտոնագիր ստանալու համար: Արտոնագիրը պետությունն է տրամադրում օտարերկրյա ներդրողին, որով նրան թույլ է տալիս երկիր ներմուծել ապրանքների որոշակի տեսակներ: Օրինակ՝ կարող է սահմանափակում լինել պանրի վրա և պետությունը միայն մի քանի օտարերկրյա ընկերության տրամադրի արտոնագրեր, որոնք նրանց թույլ կտան հանդես գալ որպես ներկրողներ: Սա ստեղծում է մրցակցության սահմանափակում և գներն է բարձրացնում սպառողների համար:⁶

Պետությունը ներմուծման արտոնագիր կարող է տրամադրել 3 հիմնական եղանակով՝

1. Մրցակցային աճուրդով, երբ կառավարությունը հայտարարում է կոնկրետ վայր և ժամ աճուրդի համար և ունենում է ապրանքի համար ամենաբարձր գինը (սա առավել շահավետ և արդարացի տարբերակն է):
2. Ֆիքսված նախապատվությունով, երբ, առանց մրցույթի, դիմումների և բանակցությունների, կառավարությունը տալիս է արտոնագրեր հաստատված որոշ ընկերությունների՝ ելնելով ազգային պահանջարկից:
3. Ռեսուրսների կիրառման դիմումների ընթացակարգ, երբ մասնագետներին բաղկացած հանձնաժողով է ստեղծվում, որը գնահատում է տարբեր

⁴ St' u Dr. Melaku Geboye Desta- The Law of International Trade in agricultural Products; էջ 30:

⁵ St' u United Nations; The Single Window Concept; 2003:

https://ec.europa.eu/taxation_customs/sites/taxation/files/resources/documents/customs/policy_issues/e-customs_initiative/ind_projects/swannexv.pdf

⁶ St' u Brent Radcliffe- The Basics of Tariffs And Trade Barriers; Scientific Article; 2018:

<https://www.investopedia.com/articles/economics/08/tariff-trade-barrier-basics.asp>

ընկերությունների ռեսուրսներն ու գործունեությունը և ըստ դրա է արտոնագրեր տալիս (այստեղ մեծ է պետության միջամտությունը):⁷

ԱՀԿ-ի շրջանակներում գոյություն ունի առևտրի տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ համաձայնագիր (TBT Agreement), որը պարտադիր է անդամ պետությունների համար և համակարգում է պետությունների՝ տեխնիկական խոչընդոտների տեսքով սահմանափակումները: Համաձայնագիրը 3 չափանիշ է սահմանել, որով կարող է վերահսկել տեխնիկական անհիմն սահմանափակումները՝

1. Եթե կան միջազգայնորեն ընդունված ընթացակարգեր, ապա պետությունը պետք է հետևի դրանց,
2. Եթե չկան նմանատիպ ընթացակարգեր, ապա պետությունն իրավասու է սահմանել կանոնակարգեր, բայց դրանք չպետք է խոչընդոտեն շուկա մուտք գործելուն կամ լինեն խտրական և հովանավորչական,
3. Պետությունը պետք է բարեխղճորեն տեղեկացնի տնտեսվարող սուբյեկտին, եթե տեղի է ունենում տեխնիկական կանոնակարգերի փոփոխություն, որը կարող է ազդեցություն ունենալ ներդրումների վրա: ⁸

Ընդհանուր առմամբ՝ տեխնիկական չափորոշիչների և այլ գիտատեխնիկական փաստաթղթերի պահանջները կոչված են նպաստելու ապրանքների տեխնիկական մակարդակի և որակի բարձրացմանը, ապահովելու տեխնիկական անվտանգությունը և պահպանելու շրջակա միջավայրը: Տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների վերաբերյալ բազմաթիվ օրինակներ կան, որոնցից մեկն էլ ԱՄՆ-ի գործն է: Մի վիճակագրության համաձայն՝ 1980-ական թվականներին ԱՄՆ-ում գրանցված վթարների թիվը ցույց է տվել, որ փողոցներում հեծանիվներով երթևեկությունն առողջության համար ռիսկեր է պարունակում և վտանգավոր է: Հետագա ուսումնասիրությունները պարզել են, որ երթևեկողների 85%-ի գլխային վնասվածք ունենալու ռիսկերը սաղավարտները նվազեցրել են: 1994 թվականին ԱՄՆ-ի օրենսդիր մարմինն արձագանքել է հետազոտություններին և ընդունել «Հեծանիվների սաղավարտների անվտանգության մասին» ակտ, որով 3 չափանիշ է ընդունվել, որոնց էլ պետք է համապատասխաներ ԱՄՆ մուտք գործած ցանկացած հեծանիվ: Մինչև ակտի ընդունումը կային բազմաթիվ ընդունված ստանդարտ-

⁷ Տե՛ս Peter H. Lindert, Thomas A. Pugel- International Economics, 10th edition, 1996; էջ 140:

⁸ Տե՛ս WTO; Agreement on Technical Barriers to Trade;

https://www.wto.org/english/docs_e/legal_e/17-tbt_e.htm

ներ, որոնք կամավոր բնույթ էին կրում, սակայն տվյալ ակտը համարվեց «ժամանակավոր պարտադիր ստանդարտ», այսինքն՝ տվյալ ժամանակաշրջանից պարտադիր էր համարվում, որով պաշտպանում էր մարդկանց անվտանգությունն ու նվազեցնում վտանգի ռիսկերը:⁹

Տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ հայտնի գործերից է նաև Սարդինայի գործը: Եվրոպական համայնքները տեխնիկական կանոնակարգ են սահմանում, որով Եվրոպական միության տարածք սարդինա մականշմամբ կարող է ներմուծվել այն ձուկը (*Sardina pilchardus* Walbaum), որը որսացել են Խաղաղ օվկիանոսի կոնկրետ հատվածում: Գոյություն ունի համաչափության սկզբունք (proportionality test)¹⁰՝ ըստ որի 2001 թվականին դատարանը որոշում է, որ սարդինա ձուկն ունի իր տարատեսակները, սակայն անկախ նրանից, թե որ ջրերում է, այն իր տեսակին համապատասխան է մնում: Դատարանը հղում է կատարում Մանիլի անվտանգության միջազգային հանձնաժողովին^{10*}՝ նշելով, որ նույնիսկ տվյալ փաստաթղթում չկա փաստ սարդինա ձկան տարատեսակների տարբերության վերաբերյալ:¹¹ Այսինքն՝ համաչափության սկզբունքի 3 բաղադրիչներից (պիտանի, անհրաժեշտ և համաչափ) անհամաչափ է կիրառվող կանոնակարգը:¹² Նման դեպքում կանոնակարգի փոխարեն կարելի է պիտակավորել, թե որ ջրերից է դուրս բերվել ձուկը, և սպառողն ինքը կարող է որոշել՝ ձեռք բերել ապրանքը, թե՞ ոչ:

Այսպիսով, միջազգային պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ տեխնիկական կանոնակարգեր սահմանելով պետությունները փորձում են ավելորդ ծախսեր սահմանել երկրների համար,

⁹ Տե՛ս Alex Inklaar- Technical Regulations; Recommendations for their elaboration and enforcement; International Trade Center; 2009; էջ 14:

https://www.ptb.de/cms/fileadmin/internet/fachabteilungen/abteilung_9/9.3_internationale_zu_sammenarbeit/publikationen/201_Guide_Technical_Regulations/PTB_Q5_Guide1_Technical_Regulations_EN.pdf:

^{10*} (Codex Alimentarius, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և ԱՀԿ-ի ներքո ստեղծված գլխավոր 3 գործակալություններից մեկն է, որը պատասխանատու է սպառողների առողջությունը պաշտանելու և սննդի առևտրի արդարացի կիրառման համար)

¹¹ Տե՛ս International Food Standards:

<http://www.fao.org/fao-who-codexalimentarius/en/>

¹² Տե՛ս Gregory Shaffer and Victor Mosoti- The EC-Sardines Case: How North-South NGO-Government Links Benefited Peru; Vol 3:2; 2002:

ինչպես նաև ամեն կերպ պաշտպանել և հովանավորել իրենց ներքին արտադրանքն ու արտադրողին:

ТЕХНИЧЕСКИЕ БАРЬЕРЫ КАК НЕТАРИФНЫЕ БАРЬЕРЫ СВОБОДНОЙ ТОРГОВЛИ

Налбандян Анаит Армановна

*Соискатель Института философии,
социологии и права Национальной
академии наук Республики Армения*

В результате изучения международной практики выяснилось, что государства всеми силами пытаются защищать свою отечественную продукцию и производителей. С этой целью государства устанавливают друг для друга скрытые препятствия, одним из видов которых являются технические барьеры. В статье изучены и проанализированы некоторые виды технических барьеров, их роль и значение для государств. Отдельно, в контексте ВТО, обсуждается «Соглашение о технических барьерах в торговле», приводятся примеры технических барьеров, существующих между государствами.

Ключевые слова: нетарифные барьеры свободной торговли, технические барьеры, техническое регулирование, стандарты, лицензия, принцип пропорциональности, международная практика.

TECHNICAL BARRIERS AS NON-TARIFF BARRIERS OF FREE TRADE

Nalbandyan Anahit

*Postgraduate student of the Institute
of Philosophy, Sociology, and
Law National Academy of Sciences
of the Republic of Armenia*

As a result of the study of international practice, it became clear, that states try to protect their domestic products and producers in every way. For that

purpose, states define confidential barriers, one of which are technical barriers. Some types of the technical barriers, their meaning and importance for states have been studied and analyzed in the article. Specifically, Trade Barriers to Trade Agreement was discussed in the context of the WTO and were introduced examples of technical barriers between states.

Key words: non-tariff barriers of free trade, technical barriers, technical regulation, standards, license, proportionality principle, international practice.

Հոդվածը գրախոսվել է՝ 21.12.2021թ.

Ներկայացվել է տպագրության՝ 14.01.2022թ.

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սարգսյան Վահագն

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի ավագ դասախոս,
ոստիկանության փոխգնդապետ*

Երկրագնդի վրա տեղի ունեցող և զարգացող աղետները և բնակլիմայական անոմալ երևույթները շարունակում են մշտապես վտանգավոր լինել մարկանց բնականոն կյանքի և գործունեության համար: Այդ վտանգի չափն ավելի է մեծանում, երբ վերոնշյալ երևույթներից բխող սպառնալիքին ավելանում են պատերազմները:

Կարելի է ենթադրել, որ մարդը՝ որպես աստծո կողմից ստեղծված արարած, ի սկզբանե ավելի պաշտպանված է եղել, քան մեր օրերում: Քաղաքակրթական փուլային զարգացումներն աստիճանաբար մեծացրել են նրա անվտանգ ապրելու ռիսկերը, դարձրել ավելի խոցելի և վտանգված:

Ապրելով քարանձավներում՝ չեն ունեցել երկրաշարժերից, փոթորիկներից, ջրհեղեղներից և տարերային այլ աղետներից պաշտպանությանն ուղղված գործողությունների այնպիսի մեծ անհրաժեշտություն, որն ստեղծված է հիմա:

Չկային խիտ բնակեցված (**Մումբայ** Քաղաքի բնակչությունը մոտ 14 միլիոն մարդ է կազմում) և բարձրահարկ շենքերով լցված քաղաքներ, ինչի արդյունքում մեր օրերում աղետների հետևանքով մարդկությանը պատճառված կորուստներն անհամեմատ շատ են:

Չկային միջուկային, քիմիական և կենսաբանական վտանգավոր օբյեկտներ, օդային, երկաթուղային, ջրային, ավտոտրանսպորտային միջոցներ, որոնց վթարները ներկայումս հանգեցնում են հազարավոր զոհերի:

Գոյություն չունեին զանգվածային ոչնչացման և ժամանակակից խոցման զենքերի բազմաթիվ և բազմաֆունկցիոնալ տեսակներն ու կուտակված

պաշարները, ինչի առկայությունը երկրագնդի վրա այժմ սպառնում է ոչ միայն առանձին քաղաքների, պետությունների, այլև ողջ մարդկության և երկիր մոլորակի գոյությանը:

Ելնելով վերոգրվայից՝ ներկայացնենք տեղի ունեցող այն գործընթացները, որոնք միտված են աղետների ռիսկերի նվազեցմանը և արտակարգ իրավիճակների ու պատերազմների ժամանակ բնակչության պաշտպանությանը:

Աշխարհում ձևավորված ռազմաքաղաքական գործոնների ազդեցության տակ զարգացած երկրների մեծ մասում ի հայտ են եկել ՔՊ զարգացման որոշակի ընդհանուր միտումներ: Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների միջև տեղի են ունենում ՔՊ ոլորտում ծախսերի, պատասխանատվության, իրավասությունների վերաբաշխման գործընթացներ: Մեծանում է տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը: Կատարվում է պետական և ոչ պետական սեկտորներին հատկացվող ծախսերի վերաբաշխում, քանի որ նույնիսկ շատ հարուստ երկրները սեփական բյուջեից չեն կարող լիովին ծածկել ՔՊ ծախսերը: Պետական անվտանգության ապահովման բնագավառում, որում ներառվում է նաև ՔՊ-ն, բնութագրական է դառնում ինտեգրված կառավարման սկզբունքների կիրառման գործընթացը:

Վերջին տարիներին ՔՊ ոլորտում կատարվել են հայեցակարգային բնույթի փոփոխություններ, որոնցից են՝ խնդիրների և գործընթացների ընդլայնումը, ուժերի և միջոցների կիրառումը ոչ միայն պատերազմական, այլև լայնամասշտաբ արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) հետևանքների վերացման համար՝ ներառյալ տեխնոլոգիական ահաբեկչության հետևանքների վերացումը: ՔՊ համակարգերը դարձել են ավելի շարժունակ և ճկուն: ՔՊ արդյունավետությունը մեծանում է նրա միջոցառումների նախապատրաստման և անցկացման գործընթացում քաղաքացիական հասարակության բոլոր շերտերի և պետական կառույցների մասնակցության շնորհիվ: Օտարերկրյա պետություններում ձգտում են ՔՊ-ն դարձնել հասարակության բնականոն կյանքի բաղկացուցիչ մասը, ուր յուրաքանչյուր քաղաքացի մասնակցում է ՔՊ միջոցառումներին: ՔՊ զարգացման միջազգային փորձի վերլուծությունից երևում է, որ ՔՊ-ն աստիճանաբար դառ-

նում է ավելի ու ավելի օպերատիվ, գործելու ունակ ինչպես ռազմական, այնպես էլ խաղաղ պայմաններում:¹

Եվ եթե նախկինում պետության առանձին գործողություններն ուղղված էին տեղի ունեցած աղետների հետևանքների վերացմանը, ապա աղետների աճն ստիպեց նորովի նայել համակարգի դերին և նշանակալությանն ու ստեղծել համապատասխան իրավական դաշտ: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության գործունեությունը գրեթե ամբողջովին կազմակերպվում և իրականացվում է միջազգային համագործակցության շրջանակներում հետևյալ կազմակերպությունների համագործակցությամբ՝ ՄԱԿ, ՆԱՏՕ, ՄԱԳԱՏԵ, ԱՊՀ երկրների բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդ և այլն:

1994 թվականից Հայաստանը «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության» լիիրավ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս ուղղակի գործնական կապեր հաստատել տարբեր երկրների համապատասխան ազգային կառույցների հետ:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ոչ հարուստ պատմության մեջ առանձնանում է 1998 թվականը, երբ ընդունվեց համակարգի գործունեությունը կանոնակարգող առաջին՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Օրենքը հիմք հանդիսացավ ԱԻ-ում բնակչության պաշտպանության պետական կառավարման համակարգի ստեղծման համար, որի հիմնական նպատակն է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև դրանց ուժերի և միջոցների համախմբումը՝ ԱԻ կանխման և հետևանքների վերացման գործընթացի արդյունավետ իրականացման համար:

ԱԻ-ում բնակչության պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տարբերակված ըստ տարիքային, բնատարածքային, ռազմավարական, տնտեսական առանձնահատկությունների:

¹Տե՛ս Աղետների նվազեցման կրթություն. ձեռնարկ՝ կրթական հաստատությունների և դպրոցների մանկավարժների համար: Էջ 11-13

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (02.12.1998թ.) սահմանվում են բնակչության պաշտպանության սկզբունքները:

ԱԻ-ում բնակչության պաշտպանության սկզբունքներն են՝

- . Մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը,
- . ԱԻ-ում բնակչության պաշտպանության հարցերի հրապարակայնությունը,
- . Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպմանը համալիր մոտեցում ցուցաբերելը,
- . Տեխնածին վթարների, աղետների առաջացումը բացառելու նպատակով միայն ստուգված և տեխնիկայի անվտանգությունն ապահովող փորձարկված միջոցառումների իրականացումը:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ձևերն են՝ պատասպարումը, անհատական պաշտպանությունը և տարհանումը:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պատասպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատասպարման համար ազդարարման ազդանշանները տրվում են հետևյալ դեպքերում՝

- «Օդային տագնապ» ազդանշանը՝ Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման դեպքում.
- «Ուշադրություն՝ ն բոլորին» ազդանշանը՝ արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության, Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման ավարտի դեպքերում:

«Օդային տագնապ» ազդանշանի դեպքում էլեկտրաշահկների միջոցով տրվում է ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան՝ 2-3 րոպե տևողությամբ, միաժամանակ բարձրախոսներով տրվում է «Օդային տագնապ», պատասպարվել պաշտպանական կառույցներում» բովանդակությամբ համապատասխան հաղորդագրություն:

«Օդային տագնապ» ազդանշանի դեպքում՝

- պետական կառավարման հանրապետական մարմիններն ու կազմակերպությունները պետք է կազմակերպեն ենթակա մարմնի և նրա ստորաբաժանումների անձնակազմի, իսկ պետական կառավարման

տարածքային մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան մարզի և համայնքի բնակչության պատասպարումը պաշտպանական կառույցներում:

- բնակչությունը պետք է պատասպարվի պաշտպանական կառույցներում:

«Ուշադրություն՝ բոլորին» ազդանշանի դեպքում էլեկտրաշակների միջոցով տրվում է չընդհատվող ձայնային ազդանշան՝ 2-3 բուլբ տևողությամբ, միաժամանակ ազդարարման միջոցներով տրվում է «Ուշադրություն՝ բոլորին, ուշադրություն՝ բոլորին ...» բովանդակությամբ համապատասխան հաղորդագրություն (օրինակ՝ «Ուշադրություն՝ բոլորին, ուշադրություն՝ բոլորին: Ճառագայթային վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին.....», «Ուշադրություն՝ բոլորին, ուշադրություն՝ բոլորին: Հայտարարված է քիմիական տագնապ, վտանգ է սպառնում ... թաղամասերին, ... շենքերին...», «Ուշադրություն՝ բոլորին, ուշադրություն՝ բոլորին: Մանրէաբանական վտանգ է սպառնում հետևյալ տարածքներին.....», «Ուշադրություն՝ բոլորին, ուշադրություն՝ բոլորին: Աղետալի ջրածածկման վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին... տներին, ... կազմակերպություններին ...», «Ուշադրություն՝ բոլորին, ուշադրություն՝ բոլորին: Օդային տագնապի ավարտ: Դուրս գալ պաշտպանական կառույցներից ... (կամ կատարել ... գործողությունները) »):²

Բնակչության պատասպարումը ԱԻ-ում՝ զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովումն է համապատասխան շինությունների տարածքում: Այն իրականացվում է վերգետնյա և ստորգետնյա հատուկ շինություններում (ապաստարաններ, թաքստոցներ, մետրոպոլիտեն և այլն):

Բնակչության կազմակերպված և ժամանակին պատասպարման համար պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման

² Տե՛ս ՀՀ կառավարության № 346 որոշում. 06.04.2017

«ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին»:

մարմինները, կազմակերպությունների ղեկավարներն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ անցկացնում են բնակչության, աշխատողների և ծառայողների պաշտպանական կառույցներին ամրագրման միջոցառումներ:

Պաշտպանական կառույցների մուտքի վրա կախվում են ցուցատախտակներ, իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող շարժական երթուղիների վրա՝ ցուցանշաններ:

Պաշտպանական կառույցների սպասարկման և պատսպարման կազմակերպման նպատակով դրանց կից ստեղծվում են փրկարար ուժեր (սպասարկող խմբեր և օղակներ), որոնց անձնակազմը պարտավոր է՝

- ապահովել պաշտպանական կառույցների նախապատրաստումը պատսպարվողների ընդունման համար.
- հետևել պաշտպանական կառույցները պատսպարվողներով լրացման և շահագործման ընթացքին.
- իմանալ շահագործման և անվտանգության տեխնիկայի կանոնները պաշտպանական կառույցների բոլոր սարքավորումների շահագործման դեպքում.
- կազմակերպել պատսպարվող բնակչության սնումը, բժշկական ապահովումը:

Ապաստարանները և թաքստոցներն սպասարկող խմբերի և օղակների կազմում կարող են ներգրավվել բոլոր աշխատունակ մարդիկ:

Համապատասխան ազդանշան ստանալով՝ պաշտպանական կառույցներն սպասարկող խմբերի և օղակների անձնակազմները բերվում են պատրաստականության և ժամանելով իրենց աշխատատեղերը՝ պատրաստում են պաշտպանական կառույցները՝ պատսպարվողներին ընդունելու համար:

Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության պատսպարման համալիր միջոցառումներ:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանների համաձայն:

Աշխատանքային հերթափոխի աշխատողներն ու ծառայողներն օբյեկտների համապատասխան պաշտոնատար անձանց ղեկավարությամբ զբաղեցնում են պաշտպանական կառույցները՝ համաձայն օբյեկտի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության պետի կողմից նախապես մշակված պլանների:

Հասարակական վայրերում գտնվող բնակչությունը պատսպարվում է ըստ գտնվելու վայրի՝ պաշտպանական կառույցներում օգտագործելով մետրոպոլիտենը, ստորգետնյա անցումները, շենքերի և այլ կառույցների առաջին հարկերը:

Պաշտպանական կառույցներով չապահովված բնակչությունը մասնակցում է պարզագույն թաքստոցների կառուցմանը՝ հետագայում դրանցում պատսպարվելու նպատակով՝ համաձայն պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից հաստատված պլանի:

Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստականության պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում, իսկ ՀԱԷԿ-ում և քիմիական վտանգավոր օբյեկտներում, որոնք գտնվում են մշտական պատրաստականության վիճակում, անմիջապես:

Պաշտպանական կառույցներում տեղավորվում են կազմակերպված և արագ՝ կառույցի պարետի (ավագի) ցուցումով: Քաղաքացիական պաշտպանության ազդանշանից հետո համապատասխան մարմինների կողմից նախօրոք նշված ժամանակն սպառվելուն պես պաշտպանական կառույցներում մարդկանց տեղավորումը դադարեցվում է, և դռները փակվում են:

Պաշտպանական կառույցներում անհրաժեշտ է խստորեն պահպանել սահմանված ռեժիմն ու կարգը: Պատսպարվողները պարտավոր են անվերապահորեն կատարել պարետի (ավագի) և հերթապահների բոլոր կարգադրությունները:³

Տարհանումն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակ-

³ Տե՛ս ՀՀ կառավարության որոշում՝ «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» № 529. 028.09.2000

չության կամ բնակչության մի մասի, ինչպես նաև նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխման ու տեղաբաշխման միջոցով:

Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Վարչապետի) կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքում (բնակավայրերում, կազմակերպություններում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

Տարահանումը կարող է իրականացվել 2 փուլով: Առաջին փուլում բնակչության տարահանում՝ աղետի գոտուց անվտանգ տարածք՝ ժամանակավոր տեղակայման կետեր: Ժամանակավոր տեղակայման կետերի համար կարող են օգտագործվել կինոթատրոնները, ակումբները, ուսումնական հաստատությունները, հյուրանոցները, հանրակացարանները, վրանային ավանները և այլն: Երկրորդ փուլում տնական բնույթի արտակարգ իրավիճակների կամ մշտական բնակչության վայր վերադառնալու անհնարինության դեպքում բնակչությանը ժամանակավոր տեղակայման կետերից տեղափոխում են երկարատև բնակչության կետեր, որտեղ հնարավոր է բնակչության երկարատև և համակողմանի կենսագործունեության ապահովումը: Երկարատև բնակչության կետերի համար կարող են օգտագործվել առողջարանները, նախաբուժարանները, հանգստյան տները, պանսիոնատները, տուրիստական բազաները, հյուրանոցները և այլ շինություններ, որոնք համապատասխանում են երկարատև բնակչության պայմաններին: Ժամանակավոր տեղակայման կետերը և երկարատև բնակչության կետերն ընտրվում են նախօրոք՝ ելնելով արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ առաջացող հնարավոր իրավիճակներից:

Տարահանման միջոցառումներում օգտագործվում են պետական, հասարակական և անհատական տրանսպորտի բոլոր միջոցները: Բնակչության որոշ մասը տեղափոխվում է հետիոտն շարասյուներով:

Բնակչության տարահանումը պլանավորելու և իրականացնելու նպատակով ստեղծվում են տարահանման հանձնաժողովներ, որոնք տարահանման

հավաքների միջոցով բնակչությանը փոխադրում են անվտանգության գոտիներ: Տարհանված բնակչության կազմակերպված ընդունման, տեղաբաշխման և կենսաապահովման նվազագույն պայմանների ապահովման համար ստեղծվում են ընդունող հանձնաժողովներ և ընդունման կետեր (ՀՀ կառավարության № 824-ն որոշում 24.06.2010):

Տարերային, տեխնածին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարհանման մասին որոշում ընդունում են հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները՝ իրենց համակարգի աշխատողների համար, Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար, և կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար, նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք:

Տարհանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է ընդունված որոշման մասին տեղեկացնել լիազորված մարմին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը (ձգնաժամային կառավարման կենտրոնին):

Արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման աշխատանքների ղեկավարն իրավունք ունի ինքնուրույն որոշում ընդունելու վտանգավոր տարածքից բնակչությանն անվտանգ վայր տեղափոխելու վերաբերյալ:

ԱԷԿ-ի ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում ԱԷԿ-ին հարակից 5 կմ շառավղով նախահարձակ պաշտպանական գործողությունների իրականացման գոտու բնակավայրերի բնակչության տարհանումը կազմակերպվում է ԱԷԿ-ից ստացած ահազանգի հիման վրա՝ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից, իսկ 5 կմ շառավղով գոտուց դուրս՝ վերոգրյալ կարգով:

Պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարհանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Բնակչության տարհանման պլանավորումը և կազմակերպումը, տարհանված բնակչության տեղաբաշխումը, բազմակողմանի կենսաապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարհանման հանձնաժողովների միջոցով:

Տարհանման հանձնաժողովները նախապես որոշում և տարհանման միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են տարհանումն իրականացնող մարմինների, տարհանման և ընդունման հավաքակալայանների, կարճաժամկետ տեղակայման կետերի, երկարատև բնակության կետերի գտնվելու վայրի մասին:

Տարհանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարհանման պլաններով, որոնք ներառում են՝ բնակչության տարհանման անցկացման կարգն ու ժամկետները, տարհանման համար տրամադրվող ուժերն ու միջոցները, տարհանման երթուղին, տարհանման և ընդունման հավաքակալայաններում աշխատանքների կազմակերպումը, տարհանման հաշվարկը՝ ըստ տրանսպորտային տեսակների ու տարհանման երթուղիների, ընդունող բնակավայրերում տարհանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով ապահովման կանոնակարգը, նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

Բնակչության տարհանման պլանները մշակում են տարհանման համապատասխան հանձնաժողովները՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ:

Տարհանման հանձնաժողովներն ստեղծվում են՝

- հանրապետական տարհանման հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ.
- հանրապետական գործադիր մարմնի հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով.
- մարզային տարհանման հանձնաժողովները՝ Հայաստանի Հանրապետության մարզպետի որոշմամբ.
- համայնքային տարհանման հանձնաժողովը՝ համայնքի ղեկավարի որոշմամբ.
- կազմակերպության տարհանման հանձնաժողովը՝ կազմակերպության ղեկավարի հրամանով:

Տարհանման հանձնաժողովի նախագահ է նշանակվում հանձնաժողովն ստեղծող մարմնի ղեկավարի տեղակալը (այդպիսին չլինելու դեպքում՝ տվյալ ղեկավարի կողմից նշանակված անձը):

Տարհանման հանձնաժողովները գործում են իրենց կանոնադրությունների համաձայն, որոնք հաստատվում են հանձնաժողովներն ստեղծող մարմինների ղեկավարների կողմից: Կանոնադրությունների օրինակելի ձևերը մշակում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը սահմանում է տարհանման պլանների կառուցվածքն ու համապատասխան փաստաթղթերի ձևերը:

Բնակավայրերում կարող է ստեղծվել մեկ կամ ավելի տարհանման հավաքակայան՝ մեկ հավաքակայանում 10000 տարհանվողից ոչ ավել՝ սպասարկման սկզբունքներով:

Տարհանման հավաքակայաններն ստեղծվում են հանրակրթական և հասարակական կազմակերպությունների տարածքներում, ապահովվում կապի միջոցներով, բուժսպասարկման կետով, մոր ու մանկան և հանգստի սենյակներով: Տարհանման երթուղիները ճշգրտվում են տարհանման հավաքակայաններում:

Բնակչության տարհանումն իրականացվում է տարհանման հավաքակայաններից, որտեղ տարհանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարհանվողները:

Յուրաքանչյուր տարհանվողի առաջարկվում է՝

- ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, երեք օրվա սննդամթերք և այլ անհրաժեշտ պարագաներ.
- հոսանքազրկել բնակարանը և անվտանգ տեղեր տեղափոխել հրդեհավտանգ ու պայթյունավտանգ նյութերը և առարկաները.
- տարհանման և ընդունման հավաքակայաններում ու երթի ընթացքում կատարել հավաքակայանների ու շարասյան պետերի հրահանգներն ու հանձնարարականները:

Տարհանման ժամանակ հասարահանական տրանսպորտով տեղափոխվող իրերի և սննդամթերքի ընդհանուր զանգվածը չպետք է գերազանցի 50կգ մեկ անձի համար: Տարհանումը հետիոտն կատարելու դեպքում տարհանվողներից կազմավորվում են շարասյուներ: Շարժման արագությունը՝

4-5կմ/ժ, 1-1.5 ժամ անցումից հետո հայտարարվում է 10-15 րոպե դադար, իսկ շուրջօրյա երկրորդ կեսին՝ մեծ դադար՝ 1-2 ժամով: Հետիոտն շարայունների երթը պլանավորվում է 1 շուրջօրյա անցման հեռավորությամբ:⁴

Բնակչության անհատական պաշտպանությունը մարդկանց՝ ճառագայթային թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանական միջոցներով ապահովումն է, որն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները:

Չափահաս բնակչության և երեխաների համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները պահպանվում են զորահավաքային պահուստի պահեստներում:

Կազմակերպությունների աշխատողների անհատական պաշտպանության միջոցների պաշարները պահպանվում են տվյալ կազմակերպությունների պահեստներում, ինչպես նաև դրանց համար նախատեսված պահարաններում:

Անհատական պաշտպանության միջոցների պահպանման պայմանները պետք է բավարարեն տվյալ օբյեկտում Հայաստանի Հանրապետության ԱԻՆ կողմից սահմանված քաղաքացիական պաշտպանության գույքի երկարատև պահպանման պահանջները:

Պահեստների շենքերի պայմանների անբավարարության և քաղաքացիական պաշտպանության գույքի երկարատև պահպանման պահանջների անհամապատասխանության դեպքում թույլատրվում է անհատական պաշտպանության միջոցները պահել ապաստարաններում ու այլ շինություններում:

Զորահավաքային պահուստի՝ որակական հատկանիշները կորցրած անհատական պաշտպանության միջոցները, որոնք լաբորատոր հետազոտման են ենթարկվում Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ճառագայթային և քիմիական լաբորատորիայում, ենթակա են զորահավաքային պահուստից ապամրագրման՝ ՀՀ կառավարության որոշմամբ, ԱԻՆ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր պետական ռեզերվների վարչության ներկայացմամբ:

⁴ Տե՛ս «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանման մասին» ՀՀ կառ. № 1496-ն որոշում:

Կազմակերպությունների՝ պաշտպանական հատկանիշները կորցրած անհատական պաշտպանության միջոցները (լաբորատոր հետազոտման իրականացումը և համապատասխան եզրակացությունը) հանձնվում են Հայաստանի Հանրապետության ԱԻՆ, որոնց փոխարեն տրվում են նորերը:

Ձորահավաքային պահուստի ապամարագրված անհատական պաշտպանության միջոցները կարող են օգտագործվել բնակչության և կազմակերպությունների փրկարար ուժերի ուսուցման համար:

Ձորահավաքային պահուստից անհատական պաշտպանության միջոցները բնակչությանը բաշխվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ կազմակերպություններում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի որոշմամբ:

Ձորահավաքային պահուստի և կազմակերպությունների անհատական պաշտպանության միջոցների տեղաբաշխումն ու պահպանումն իրականացվում են՝ հաշվի առնելով կարճ ժամանակահատվածում դրանց բաշխման անհրաժեշտությունը:

Վտանգի առկայության դեպքում կազմակերպությունների փրկարար ուժերի անձնակազմաներին, Հայկական ԱԷԿ-ի և քիմիական վտանգավոր օբյեկտների աշխատողներին, ինչպես նաև այն քաղաքների բնակչությանը, որտեղ տեղակայված են այդ օբյեկտները, և հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությանն անհատական պաշտպանության միջոցները բաշխվում են նախօրոք:

Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում անհատական պաշտպանության միջոցների բաշխման կարգը սահմանվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության պլաններով:

Նշված պլաններով որոշվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերը, ժամանակը, քանակը և հերթականությունն ըստ համայնքների ու կազմակերպությունների:

Այդ պլաններում նշվում են նաև պահեստներից անհատական պաշտպանության միջոցների ստացման, բաշխման կետեր հասցնելու, դրանց ստուգման և հարմարեցման, բեռնման-բեռնաթափման խմբերը, ինչպես

նաև տրանսպորտային միջոցներ հատկացնող կազմակերպությունները և պատասխանատու անձինք:⁵

ПРИНЦИПЫ, ФОРМЫ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ И ДЕЙСТВИЯ, ОСУЩЕСТВЛЯЕМЫЕ ВО ВРЕМЯ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ И ВОЙН

Сардарян Ваагн Арменакович

*Академия Образовательного комплекса полиции РА
старший преподаватель кафедры уголовного права
и уголовного права, подполковник полиции*

Рост угрозы стихийных техногенных и экологических катастроф обусловлен климатом, меняющимся на планете из года в год, а также быстрым темпом развития научно-технического прогресса, что, в свою очередь, может оказать непосредственное негативное влияние на жизнь и здоровье людей.

Учитывая военно-политические ситуации, активизирующиеся в регионе день ото дня, автором представлена непосредственная угроза возможных военных ситуаций, а также принципы, формы защиты населения и действия, направленные на их выполнение в Республике Армения в установленном законом порядке, в условиях военных действий.

В статье отражены основные мероприятия системы гражданской обороны РА, направленные на защиту населения в условиях военного положения и (или) чрезвычайных ситуаций.

Ключевые слова: гражданская оборона, чрезвычайная ситуация, укрытие, эвакуация, индивидуальная защита.

⁵Տե՛ս ՀՀ կառավարության № 679 որոշում 25.10.2000թ
«Բնակչության անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելու կարգը»

PRINCIPLES, WAYS OF CIVIL PROTECTION AND ACTIONS MADE IN CASE OF EMERGENCY AND WAR

Sardaryan Vahagn

*Academy of the Educational Complex
of Police of the RA, Senior Lecturer
at the Chair of Operational Intelligence Activity
and Criminology, Police Lieutenant Colonel*

Due to climatic changes on the Earth and rapid advancement in science and technology, the threat of technogenic, natural and environmental disasters increases year by year, which might make an immediate negative impact on public health and life.

Taking into account the currently activating politico-military situation in the region, the author represents the principles, ways of civil protection, and actions made in case of war threat and wartime, under the law of the Republic of Armenia.

The article takes into focus the main measures of the civil protection system of the Republic of Armenia in case of military situation and (or) emergency.

Key words: civil protection, emergency, sheltering, evacuation, private protection.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.01.2022թ.

Ներկայացվել է տպագրության՝ 07.02.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քուրքյան Ծովինար

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

20-րդ դարի ավարտը և 21-րդ դարի սկիզբը միջազգային հարաբերությունների ասպարեզում ընդգծվեց գաղափարական սկզբունքային հակամարտությամբ: Դրա արդյունքը եղավ այն, որ միջազգային դաշինքների, առանձին պետությունների և տարբեր կառույցների անվտանգության ապահովման վերաբերյալ ավանդական տեսակետներն ու պատկերացումները կորցրին իրենց արդիականությունը:

Հայաստանը գտնվում է մի այնպիսի տարածաշրջանում, որտեղ առկա են անցումային ժամանակաշրջանին բնորոշ բոլոր զարգացումները: Ավելին, 2020 թվականի արցախյան պատերազմից հետո ստեղծված նոր ստատուս-քվոյի պայմաններում Հարավային Կովկասում դրսևորվում են ուժերի նոր հարաբերակցության ձևավորման, նոր դաշինքների ու համագործակցության մեխանիզմների մշակման ու գործարկման, ինչպես նաև տարածաշրջանային և դրանից դուրս ուժային կենտրոնների դերակատարության էական փոփոխման զարգացումներ:

Պետության կառավարման և ազգային զարգացման քաղաքականության կերտման տեսանկյունից կարևոր է ազգային անվտանգության և ազգային զարգացման հայեցակարգերը դիտարկել գործառության կտրվածքով: Այդ նպատակով հիմնարար նշանակություն ունի ազգային անվտանգության հայեցակարգի, գաղափարախոսության և ռազմավարության համապատասխանությունն ազգային զարգացման տրամաբանությանը:

Ազգային անվտանգության համակարգի համար կարևոր նշանակություն ունի նորմատիվ իրավական հենքի ապահովումը՝ փոխհամաձայնեցված և փոխկապակցված օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի համակցությամբ: Նորմատիվային ամրագրմամբ սահմանվում են այն իրավական նորմերը և սկզբունքները, որոնք ուղղված են ազգային անվտանգության ա-

պահովման բնագավառում իրավահարաբերությունների կարգավորմանը: Ազգային անվտանգության համակարգի գործառնությանը վերաբերող իրավական հիմքերը պետք է կարողանան լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ օրենսդրական մակարդակով ազգային շահերի ամրապնդումը, անձի, հասարակության և պետության անվտանգությանն ուղղված սպառնալիքների սահմանումը, դրանց հակազդման արդյունավետ համակարգի ստեղծումը, հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ազգային անվտանգության ապահովման հիմնական ուղղությունների սահմանումը, ազգային անվտանգության ապահովման համակարգում ընդգրկված մարմինների լիազորությունների և պարտականությունների հստակ սահմանումը, իրավախախտումների կանխարգելման մեխանիզմների ձևավորումը և այլն:

Հարկ է նշել, որ անկախացումից ի վեր Հայաստանի ազգային անվտանգության ապահովման համակարգի կատարելագործման, ինչպես նաև քաղաքական-իրավական նախադրյալների ստեղծման ուղղությամբ իրականացվել են մեծածավալ աշխատանքներ: Սակայն կարելի է համաձայնել նաև արտահայտված այն տեսակետին, որ ՀՀ ազգային անվտանգության բնագավառում հարաբերությունների օրենսդրական կարգավորման կառուցակարգերում եղել են նաև բացեր¹, ինչը պահանջում է ավելի արհեստավարժ մոտեցմամբ ապահովել հարաբերությունների համապարփակ ու փոխլրացնող համակարգով կանոնակարգում: Ներկայումս ՀՀ ազգային անվտանգության ոլորտը կանոնակարգվում է Սահմանադրությամբ, վավերացրած միջազգային պայմանագրերով, օրենքներով, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ, ՀՀ ռազմական դոկտրինով, ինչպես նաև այլ ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ-ում ազգային անվտանգության երաշխավորման գործընթացներին առնչվող ամրագրումներ են արված Սահմանադրության 1995թ., 2005թ. և 2015թ. տեքստերում: Մասնավորապես, 1995թ. Սահմանադրության մեջ նշված էր, որ Նախագահը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Միաժամանակ ամրագրված էր, որ կառավարությունն ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրակա-

¹ Մանրամասն տե՛ս Մեղրակյան Ա., Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի երրորդ Հանրապետությունում, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 20011, հմ. 1-2, էջ 153, 152-160:

նացումը²: 2005թ. Սահմանադրությամբ ամրագրվել են ՀՀ սահմանադրական կարգի հիմունքները, ինչպես նաև սահմանվել են ազգային անվտանգությունն ապահովող պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունները: Այսպես օրինակ՝ 8.2 հոդվածում նշվում է, որ զինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը³, 49-րդ հոդվածում՝ Նախագահը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է, 55-րդ հոդվածի 6-րդ մասում՝ Նախագահը կազմավորում և նախագահում է ազգային անվտանգության խորհուրդը, 86-րդ հոդվածում՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել ՀՀ Նախագահը, 89-րդ հոդվածում՝ կառավարությունն ապահովում է ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը⁴:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը կառավարման խառը՝ կիսանախագահական ձևից անցում կատարեց կառավարման խորհրդարանական ձևի: 2005թ. խմբագրված Սահմանադրությամբ գործադիր իշխանության համար պատասխանատու էին և՛ կառավարությունը, և՛ Հանրապետության նախագահը⁵, մինչդեռ գործող Սահմանադրությո-

² ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995թ., 49-րդ և 89-րդ հոդվածներ:

³ 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ զինված ուժերի վերաբերյալ որևէ դրույթ ամրագրված չէր: 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը լրացվեց 8.2-րդ հոդվածով: Սահմանադրական մակարդակով զինված ուժերի առաքելության ամրագրումը, որի շրջանակներից զինված ուժերը չեն կարող դուրս գալ, քաղաքական կայունության, ժողովրդավարական զարգացման կարևոր նախապայմաններից է: Մյուս կողմից էլ՝ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» վիճակում հայտնված Հայաստանի Հանրապետությունում օրյեկտիվորեն զինված ուժերն ստանում են հսկայական դերակատարություն: Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք», 2010, էջ 130-131:

⁴ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005/Հատուկ թողարկում, 05.12.2005, 8.2, 49-րդ, 55-րդ, 86-րդ և 89-րդ հոդվածներ:

⁵ Հարկ է նք համարում նշել, որ ՀՀ նախագահի 2007թ. ՆՀ-174-Ն հրամանագրի 41-րդ մասի համաձայն՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերին վերաբերող իրավական ակտերի նախագծերը նախքան

յամբ գործադիր իշխանության համար պատասխանատու է բացառապես կառավարությունը՝ խորհրդարանի վերահսկողության ներքո:

Խոսելով ՀՀ կառավարության սահմանադրաիրավական պատասխանատվության մասին՝ պետք է նշել, որ իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար կառավարությունը պատասխանատվություն է կրում միանձնյա: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները կառավարությունը մշակում և իրականացնում էր ՀՀ ներքին քաղաքականությունը, իսկ արտաքին, պաշտպանության և ազգային անվտանգության բնագավառներում քաղաքականությունը մշակում և իրականացնում էր ՀՀ նախագահի հետ համատեղ:

Ներկայումս վարչապետն ունի բավականին ուժեղ դիրք, բայց նա, ի տարբերություն կիսանախագահական համակարգում Հանրապետության նախագահի, մշտապես գտնվում է խորհրդարանական վերահսկողության ներքո: Այս համատեքստում կարելի է նաև փաստել, որ խորհրդարանական կառավարման ձևով պայմանավորված՝ վարչապետի դերի և կարգավիճակի որոշակի ուժեղացումը չի կարող որևէ կերպ նույնականացվել նախագահական կամ կիսանախագահական կառավարման ձևերի պայմաններում պետության գլխի ազդեցիկ դերակատարության հետ:

Գործող Սահմանադրության 152-րդ հոդվածի համաձայն՝ վարչապետը կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները, ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը: Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը (որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով): Նոր Սահմանադրության մեջ նորույթ է այն ձևակերպումը, որ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը, իսկ պաշտպանության նախարարն այդ ուղղությունների

Կառավարությունը ներկայացնելն ուղարկվում էին ՀՀ նախագահի աշխատակազմ և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ՝ կարծիքի:

շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը (155-րդ հոդված)⁶:

Ազգային անվտանգության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների ստեղծմամբ ամուր հիմք է դրվում նաև այդ ոլորտի ներպետական օրենսդրական ու ենթօրենսդրական կարգավորման համար՝ որպես «երկրի օրենսդրության ստեղծվելիք համակարգի հիմք»⁷: Սահմանադրական դրույթների իրագործման հաջորդ հիմնարար մակարդակը օրենքների միջոցով կարգավորումներն են: Ամենաընդհանուր ընկալմամբ՝ օրենքների ընդունումը ժողովրդի իշխանության իրագործմամբ ընտրված մարմնի՝ խորհրդարանի կողմից պետական քաղաքականության ծրագրերին և գործադիր իշխանության գործունեությանն ուղղված ամենասակտիվ գործառույթներից մեկն է: Անվտանգության մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներ ընդունելու լիազորությունը կարևորվում է նաև խորհրդարանի կողմից իրականացվող ժողովրդավարական վերահսկողության գործընթացում, քանի որ, ազգային անվտանգության շահերից ելնելով, երբեմն անհրաժեշտ է լինում ժամանակավորապես շրջանցել պետական մարմինների նկատմամբ վերահսկողության համար ընդունված նորմերը: Հետևաբար, արդի բոլոր խորհրդարաններն օրենքներ ընդունելիս բախվում են ընդհանուր խնդրի հետ. ինչպես ստեղծել անվտանգության արդյունավետ ծառայություններ, որոնք ի վիճակի կլինեն իրենց լիազորություններն իրականացնել ի շահ ժողովրդի և միաժամանակ ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչ օրենքներ կիրառել նրանց նկատմամբ և ինչպիսի լիազորություններ շնորհել:

Սահմանադրության ընդունումը պայմանավորեց ազգային անվտանգության ոլորտում համապատասխան օրենսդրության ստեղծումը: Ընդունվեցին «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» (1996 թվականին), «Պաշտպանության մասին» (1997 թվականին, հետագայում նոր օրենք ընդունվեց 2008 թվականին, իսկ արդեն 2017 թվականի օրենքով դրանում նե-

⁶ ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015թ., ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015, 152-րդ և 155-րդ հոդվածներ:

⁷ Նազարյան Ա.Ս., Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հմ. 2-3, էջ 36:

րառվեցին նաև զինապարտության մասին դրույթները), «Ռազմական դրության մասին» (1997 թվականին, 2006 թվականին՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»), «Ոստիկանության գորքերի մասին» (1997 թվականին), «Զինապարտության մասին» (1998 թվականին), «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» (1998 թվականին), «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» (1999 թվականին), «Ոստիկանության մասին» (2001 թվականին), «Ոստիկանությունում ծառայության մասին» (2002 թվականին), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (2002 թվականին), «Քաղաքացիական պաշտպանության մասին» (2002 թվականին), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (2003 թվականին), «Պարենային անվտանգության մասին» (2003 թվականին) «Քաղաքացիական պաշտպանության գորքերի մասին» (2004 թվականին), «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» (2012 թվականին) և այլն⁸: Սակայն հատկանշական է, որ վերը թվարկված օրենքներից յուրաքանչյուրը պարունակում է ազգային անվտանգության ապահովմանն առնչվող ընդամենը մեկ կամ երկու-երեք նորմ: Նման քանակով և ոչ համակարգված՝ տարբեր տեղերում զետեղված նորմերի միջոցով գործնականում հնարավոր չէ ստեղծել Սահմանադրությամբ սահմանված հիմունքներից ածանցված ամուր օրենսդրական հիմքեր և ենթաօրենսդրական մակարդակում արդյունավետ կարգավորել ազգային անվտանգությանն առնչվող հարաբերությունները:

2002 թվականին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է Հայաստանի Հանրապետության «ազգային անվտանգություն» հասկացությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման համակարգում ազգային անվտանգության մարմինների տեղն ու դերը, դրանց գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, ուղղությունները, ուժերն ու միջոցները, նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության կարգը և այլն⁹:

⁸ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ՀՀ ՊՏ 2018.03.28/23(1381), 21.03.2018) 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացվում է նախարարության կողմից վարվող նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում (arlis.am) հրապարակելու միջոցով, որից էլ մեջբերվում են նշված իրավական ակտերը:

⁹ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2002/6, 05.02. 2002:

Արդեն նշվեց, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ ամրագրվեցին Կառավարության վերաբերյալ նոր իրավակարգավորումներ՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում կառավարման խորհրդարանական համակարգին անցմամբ: Միաժամանակ, Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Ազգային անվտանգության խորհուրդը վերանվանվեց Անվտանգության խորհրդի և ամրագրվեց, որ Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները: «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրվեցին Անվտանգության խորհրդի կարգավիճակը, գործառույթը և լիազորությունները, սահմանվեց խորհրդի կազմը և գործունեության կարգին առնչվող հարաբերությունները, նախատեսվեցին խորհրդի որոշումների տեսակները և դրանց ընդունման կարգը, ինչպես նաև խորհրդի բնականոն գործունեության ապահովմանը վերաբերող այլ դրույթներ (մինչ այդ նշված հարցերը կարգավորում էին ՀՀ Նախագահի 2008 թվականի մայիսի 26-ի «Ազգային անվտանգության խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» ՆՀ-128-Ն հրամանագրով)¹⁰:

Ընդհանրապես իրավահարաբերությունների կարգավորման սկզբունքով ենթադրվում է, որ ամենավերևում գտնվող իրավական ակտը՝ Սահմանադրությունը, սահմանում է իրավահարաբերությունների կարգավորման իրավական հիմունքները, դրանից մեկ աստիճան ցածր գտնվող իրավական ակտերը՝ օրենքները, մանրամասնելով այդ հիմունքները՝ կարգավորում են իրավահարաբերությունները կոնկրետ ոլորտներում և ածանցյալ հիմքեր են ստեղծում հաջորդ մակարդակում այդ հարաբերությունների կարգավորման համար, իսկ ստորին հարթակում գտնվող ակտերը՝ ենթաօրենսդրական ակտերը, մանրամասն և դինամիկ կարգավորման են ենթարկում կոնկրետ հարաբերությունները¹¹:

Անվտանգության երկարաժամկետ քաղաքականությունը կազմվում է այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ կառավարության ծրագիրը, ազգային անվտանգության ռազմավարությունը, ռազմական դոկտրինը, տեղե-

¹⁰ «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), 07.03.2018:

¹¹ Քոչարյան Ս., ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 80:

կատվական անվտանգության և անվտանգության այլ ոլորտներին վերաբերող հայեցակարգային փաստաթղթերը, որոնցում ռիսկերի գնահատման հիման վրա սահմանում են անվտանգության տարբեր ոլորտների մարմինների հետաքրքրությունները և առաջնային խնդիրները: Ռազմավարական փաստաթղթերը հետագա բարեփոխումների համար ստեղծում են քաղաքական դաշտ և հիմք են ծառայում գործադիր մարմինների կողմից ենթաօրենսդրական ակտերի մշակման և տարեկան ծրագրային միջոցառումների պլանավորման ու իրականացման համար:

Հայաստանի ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղությունները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները որպես ուղեցույց ներկայացված են ինչպես 2020թ. հուլիսի 10-ին Անվտանգության խորհրդի նիստում հավանության արժանացած 2020թ. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում, այնպես էլ ՀՀ նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված ազգային անվտանգության ռազմավարությունում: 2020թ. տեքստում նշվում է, որ Ազգային անվտանգության ռազմավարության գլխավոր նպատակը Հայաստանի և ՀՀ քաղաքացիների անվտանգ և առաջանցիկ զարգացման ու բարեկեցության ապահովման համար ուղենիշների սահմանումն է՝ հիմնվելով անկախ, ինքնիշխան և հզոր Հայաստանի Հանրապետության վրա՝ որպես այս նպատակի իրագործման երաշխավոր և աշխարհասփյուռ հայ ժողովրդի հայրենիք¹²:

2007թ. տարբերակում ձևակերպված է, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է, որն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով¹³: Նշված Ռազմավարությունները

¹² ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն. Դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, Հուլիս 2020թ., էջ 2, Ռազմավարությունն ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/3gNrfKa>:

¹³ ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՆՀ-37-Ն հրամանագիրը «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007:

սահմանում են ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործունեներն ու գործողությունները, ինչպես նաև դրանց դեմ ուղղված սպառնալիքները: Վերոնշյալ երկու փաստաթղթերում արտացոլված է նաև ՀՀ դիրքորոշումը Արցախի հակամարտության խնդրի հարցում: Ազգային ռազմավարությունը միտված է պետության և հասարակության կայուն զարգացումն ապահովելուն՝ ներքին և արտաքին սպառնալիքների կանխման ու դրանց հետևանքների վերացման միջոցով:

Հայաստանի ռազմական անվտանգության ռազմաքաղաքական հիմնադրույթները, պաշտպանական ռազմավարությունը, ռազմական անվտանգության ապահովման համակարգը, ինչպես նաև պետական մարմինների՝ ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գործունեության հայեցակարգային հիմնադրույթները սահմանվում են ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատված ՀՀ ռազմական դոկտրինում¹⁴: Այն պաշտպանական բնույթի փաստաթուղթ է և պետության ռազմական անվտանգության ապահովմանն ուղղված ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմունքները ներառող պաշտոնական հայեցակետերի համախումբն է: Անկասկած, երկրի ներքին (ազգային) անվտանգության ապահովման համակարգում ռազմական անվտանգությունը պահպանում է իր առանձնացված դերակատարությունը¹⁵:

Հետագայում ՀՀ նախագահի համապատասխան իրավական ակտերով հաստատվել են նաև Մեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման

¹⁴ ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՆՀ-308-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 07. 01.2008:

¹⁵ Նշված և մի շարք այլ գնահատումների համատեքստում տարածաշրջանային արդի ռազմաքաղաքական զարգացումների վերլուծությունը, հիմնական արտաքին դերակատարների շահերի համադրումները հավաստում են ՀՀ պաշտպանական-անվտանգային ռազմավարական հիմքային փաստաթղթերի վերանայման ու արդիականացման անհրաժեշտությունը, ինչը նաև ներառված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրում՝ 1.3 – Պաշտպանության ոլորտ. ԶՈՒ Բարեփոխումներ ենթաբաժնում: Տե՛ս ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 1.3 ենթաբաժինը, էջ 17, Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ, <http://www.arlis.am>:

հայեցակարգը (2010թ.)¹⁶, Պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը (2011թ.)¹⁷, Քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը (2011թ.)¹⁸, Ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգը (2011թ.)¹⁹, ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը (2012թ.)²⁰, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը (2012թ.)²¹, Էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը (2013թ.)²², Տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարությունը (2013թ.)²³, Պետական սահմանի անցման կետերում կիրառվող ընթացակարգերում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման հայեցակարգը (2014թ.)²⁴, ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը (2014թ.)²⁵ և այլն:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ընդունումից մինչ օրս ընդունվել և հաստատվել են անվտանգության տարբեր բնագավառների զարգացմանն ուղղված ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթեր: Միննույն ժամանակ, ՀՀ կառավարության կողմից հաստատվել են նաև վերը շարադրված փաստաթղթերի դրույթների իրականացումն ապահովող նպատակային ծրագրերը: Չնայած կատարված

¹⁶ Հաստատված ՀՀ նախագահի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ՆԿ-140-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2010.09.08/43(777), 28.08.2010 (ներկայումս չի գործում):

¹⁷ Հաստատված ՀՀ նախագահի 2011 թվականի մայիսի 18-ի թիվ ՆԿ-91-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2011.05.25/29(832), 18.05.2011 (ներկայումս չի գործում):

¹⁸ Հաստատված ՀՀ նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՆԿ-229-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2012.01.09/2(876), 27.12.2011 (ներկայումս չի գործում):

¹⁹ Հաստատված ՀՀ նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ՆԿ-231-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2012.01.09/2(876), 29.12.2011:

²⁰ Հաստատված ՀՀ նախագահի 2012 թվականի ապրիլի 16-ի թիվ ՆԿ-51-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2012.04.25/21(895), 16.04.2012 (ներկայումս չի գործում):

²¹ Հաստատված ՀՀ նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՆԿ-159-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2012.11.07/54(928), 29.10.2012:

²² Հաստատված ՀՀ նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՆԿ-182-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2013.10.30/59(999), 23.10.2013:

²³ Հաստատված ՀՀ նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՆԿ-183-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2013.10.30/59(999), 23.10.2013:

²⁴ Հաստատված ՀՀ նախագահի 2014 թվականի ապրիլի 22-ի թիվ ՆԿ-50-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2014.04.30/22(1035), 22.04.2014:

²⁵ Հաստատված ՀՀ նախագահի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ՆԿ-226-Ն կարգադրությամբ, ՀՀ ՊՏ 2015.01.29/4(1093), 30.12.2014:

աշխատանքներին՝ պետք է փաստել, որ դեռևս կան ոլորտներ, որոնց վերաբերյալ հայեցակարգ կամ ռազմավարություն մինչ օրս ընդունված չէ, օրինակ՝ քիմիական նյութերի, ջրային ռեսուրսների կառավարման ոլորտները և այլն: Այդ աշխատանքները կրում են շարունակական բնույթ և տարբեր գերատեսչությունների կողմից մշտապես իրականացվում են անհրաժեշտ ուսումնասիրություններ և համապատասխան ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության կարևոր մասն են նաև պետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը՝ նաև որպես իրավունքի աղբյուրներ: Միջազգային պայմանագրերը որոշ դեպքերում սահմանափակում, իսկ երբեմն էլ ընդլայնում են ազգային անվտանգության քաղաքականությունը սահմանելու հնարավորությունները: Աշխարհի երկրների մեծ մասը Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամ են և պարտավոր են կատարել ՄԱԿ-ի կանոնադրության 2.3-րդ և 2.4-րդ հոդվածները, որոնք ամրագրում են. «Բոլոր անդամները պետք է լուծեն միջազգային վեճերը խաղաղ միջոցներով՝ առանց վտանգելու միջազգային խաղաղությունը, անվտանգությունը և արդարությունը», «Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում պետք է խուսափեն ուժի սպառնալիքից կամ գործադրումից որևէ երկրի տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ, կամ ցանկացած այլ կերպ, որն անհարիր է Միացյալ Ազգերի նպատակներին»²⁶:

Անվտանգության բնագավառում գոյություն ունեն մի շարք բազմակողմ պայմանագրեր: Միջազգային անվտանգության պայմանագրերի վավերացման հիմնական դրդապատճառը պետությունների համար միջազգային վարքականոնի սկզբունքների սահմանումն է՝ հանուն միջազգային և տարածաշրջանային անվտանգության ապահովման, երկկողմ և բազմակողմ համագործակցության ամրապնդման: Նման պայմանագրերը հիմնականում կարելի է դասել հետևյալ խմբերի (թվարկումը սպառիչ չի թվարկվում, այլ միայն ներկայացվում է պայմանագրերի օրինակներ յուրաքանչյուր խմբից).

- համաշխարհային անվտանգությունը կարգավորող պայմանագիր, օրինակ՝ Միացյալ Ազգերի Կանոնադրություն,

²⁶ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրություն, ընդունված 26.06.1945, Սան Ֆրանցիսկո, ՀՀ ԱԳՆ ՊՏ 2004.12.20/4 (12):

- միջազգային մարդասիրական օրենքի միջազգային պայմանագրեր, որոնք կարգավորում են միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտությունները, օրինակ՝ Ժնևի 1949թ. 4 Կոնվենցիաները՝ ներառյալ երկու հավելյալ արձանագրությունները, 1977թ.,

- միջազգային պայմանագրեր՝ տարբեր տիպի սպառազինությունների և դրանց պայմանակարգի վերաբերյալ, օրինակ՝ Հակաբալիստիկ հրթիռների մասին պայմանագիր, Ստրատեգիական նշանակության զենքի կրճատման մասին պայմանագիր, Ցամաքային ականների արգելման մասին կոնվենցիա, Թլատելուկոյի (Լատինական Ամերիկայում և Կարիբյան երկրներում միջուկային զենքի արգելման) պայմանագիր,

- միջազգային պայմանագրեր, որոնցով ստեղծվում են անվտանգության խնդիրներին մասամբ առնչվող տարածաշրջանային կազմակերպություններ, օրինակ՝ Ամերիկյան պետությունների կազմակերպության կանոնադրություն, Եվրամիության պայմանագիր, ԵԱՀԽ Եզրափակիչ Ակտ - ԵԱՀԽ/ԵԱՀԿ, Աֆրիկայի միության սահմանադիր ակտ,

- ռազմական համագործակցության և պաշտպանության ոլորտում փոխադարձ օգնության տարածաշրջանային համաձայնագրեր, օրինակ՝ ՆԱՏՕ-ի պայմանագիր, Համագործակցություն՝ հանուն խաղաղության պայմանագիր, ԱԵՄ (Արևմտյան Եվրոպայի միության) պայմանագիր, Միջամերիկյան փոխօգնության պայմանագիր և այլն:

Տարածաշրջանային անվտանգային ու ռազմաքաղաքական զարգացումների համատեքստում Հայաստանի Հանրապետությունը, առաջնորդվելով փոխլրացման սկզբունքով, իր ռազմական անվտանգության ապահովման հիմնական խնդիրները լուծում է՝ անդամակցելով Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությանը և «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր» իրականացնելով ՆԱՏՕ-ի հետ, արդյունավետ համագործակցություն ծավալելով իր ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի հետ, զարգացնելով հեռանկարային հարաբերություններ ԱՄՆ-ի հետ, ներգրավվելով ԱՊՀ տարածաշրջանում ընթացող գործընթացներին, հարաբերություններ հաստատելով եվրոպական անվտանգության համակարգի կառույցների հետ: Այս բոլոր ուղղությունները, անշուշտ, պարունակում են Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման համար առաջնային և կարևոր տարրեր, որոնց համադրու-

յան միջոցով առավելագույնի են հասցվում նաև երկրի ազգային անվտանգության ապահովման երաշխիքները:

Պետության անվտանգության քաղաքականության ձևավորման գործում կարևոր դեր են խաղում նաև երկկողմ պայմանագրերը: Եթե միայն երկու կողմ (պետություն) են ներգրավված, ապա պայմանագրի դրույթները կարող են բանակցությունների առարկա դառնալ՝ հնարավորինս մանրամասն համաձայնեցնելու այդ երկրների համար կարևոր նշանակություն ունեցող արժեքները, հանգամանքները և կարիքները: Այս տեսակի պայմանագրերը (օրինակ՝ 1997թ. Օգոստոսի՝ Ռուսաստանի և Հայաստանի միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին պայմանագիրը²⁷⁾ օգտագործվում են ոչ միայն բարեկամություն և ագրեսիայի բացակայություն արտահայտելու համար, այլ օգնում են լուծելու անվտանգության և ռազմաքաղաքական համագործակցության գործնական խնդիրներ. որոշ դեպքերում համաձայնություն է ձեռք բերվում երկրի սահմաններից դուրս գորք և ռազմակայաններ տեղակայելու մասին: Բացի այդ, երկկողմ համաձայնագրերը կարող են միջոց դառնալ արտաքին անվտանգության քաղաքականությունը մշակելու, այլ երկրների հետ բարեկամական հարաբերությունները խթանելու և կոնկրետ խնդիրներ լուծելու համար:

2013 թվականին ՀՀ-ում նախաձեռնելով սահմանադրական բարեփոխումներ՝ այն պայմանավորվում էր իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ: 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեի արդյունքում ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններով կառավարման կիսանախագահական համակարգից Հայաստանի Հանրապետությունն անցում է կատարել խորհրդարանական համակարգի, ինչը ամբողջությամբ գործեց 2018 թվականի ապրիլից: Անշուշտ, ՀՀ սահմանադրական բարեփոխումների արդյունքում երկիրը գտնվում է բեկումնային և պատասխանատու ժամանակաշրջանում, և պետական կառավարման նոր կարգի կայաց-

²⁷ Договор О дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения, 29.08.1997, http://www.lawrussia.ru/texts/legal_555/doc555a808x659.htm

ման շրջափուլում մեծ նշանակություն են ձեռք բերում այդ ուղղությամբ կատարվելիք աշխատանքները՝ նախատեսվող օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններն ազգային անվտանգության ապահովման գործընթացում:

ՀՀ ազգային անվտանգության բնագավառի օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկվում է լրացնել ազգային անվտանգության հիմնախնդիրների հիմնական հասկացությունների ներկայիս օրենսդրական բացը, մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրել «սպառնալիք», «վտանգ», «ոխկ» և «մարտահրավեր» հասկացությունների հստակ սահմանումը:

Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր ազգային անվտանգության ապահովման իրավական (օրենսդրական, ենթաօրենսդրական) հիմնախնդիրները վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն մարտահրավերներն ու իրողությունները, որոնք առկա են թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ տարածաշրջանում, թե՛ ընդհանրապես աշխարհում և կարող են ազդել Հայաստանի անվտանգության համակարգի վրա (օրինակ՝ աշխարհաքաղաքական առանցքի՝ Ատլանտյան օվկիանոսից դեպի Խաղաղ օվկիանոս տեղաշարժում, համընդհանրացում, կրոնական բախումներ, միջերկրկական հուզումների անընդմեջ զարգացումներ²⁸ և այլն):

Հաշվի առնելով վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները, միջազգային և տարածաշրջանային իրադրության փոփոխությունները, ծավալվող անվտանգության և ռազմաքաղաքական փոփոխությունները՝ ներկայումս գործընթաց է նախաձեռնվում վերանայելու ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը՝ երկրի ազգային անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների, սպառնալիքների ու առաջնայնությունների ճշգրտման նպատակով: Նոր ռազմավարությունը պետք է համահունչ լինի և արտացոլի նաև Հայաստանի Հանրապետությունում կառավարման նոր՝ խորհրդարանական մոդելին անցնելու առաջնահերթությունները, քաղաքական-իրավական ու կառավարչական կառուցակարգերում ազգային անվտանգության

²⁸ Henry Kissinger, *The Intellectual Underpinnings of the Trilateral Partnership in the 21st Century*. "Seeking Opportunities in Crisis: Trilateral Cooperation in Meeting Global Challenges", 2009, p. 98 (http://www.trilateral.org/download/doc/seeking_opportunities2.pdf); Fareed Zakaria, *The Post-American World*. New York, 2009, p. 2:

համակարգի էությունը, ինչից ելնելով էլ վերանայվելու են նաև անվտանգության ենթաոլորտներին վերաբերող հայեցակարգերը:

АНАЛИЗ НОРМАТИВНО-ПРАВОВЫХ КОНЦЕПТУАЛЬНЫХ ОСНОВ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Куркчян Цовинар Валериковна

*Соискатель Института философии, социологии
и права Национальной академии наук РА*

Особое значение для обеспечения национальной безопасности РА имеет действующая результативно и на высоком уровне политико-правовая система, которая должна быть сформирована и внедрена в соответствии с международной и региональной безопасностью и военно-политическими реалиями. Обеспечение безопасности Республики Армения осуществляется путем комбинированного использования всех сил, средств и ресурсов, имеющихся в её распоряжении. На политико-правовой основе национальной безопасности строится политика безопасности страны, которая непосредственно определяет видение развития государства.

Ключевые слова: национальная безопасность, нормативный акт, законодательство, конституция, закон, подзаконный акт, политика, концепция, стратегия, система управления.

ANALYSIS OF THE REGULATORY AND LEGAL CONCEPTUAL BASES OF THE NATIONAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

Qurqchyan Tsovinar

*Applicant at the Philosophy, Sociology and
Law Institute of the National Academy of
Sciences of the Republic of Armenia*

In order to ensure national security, the Republic of Armenia has a particularly significant, highly effective, politically-legal system, which should be formed and implemented in accordance with international and regional security and military-political realities. The security of the Republic of Armenia is ensured through the collective and complete usage of all forces, means and recourses at its disposal. The country's security policy is being built on the political and legal basis of national security, which directly determines the vision of the development of the state.

Key words: national security, normative act, legislation, constitution, law, bylaw, policy, concept, strategy, management system.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.02.2022թ.

Ներկայացվել է տպագրության՝ 17.02.2022թ.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРАВОВОЙ РЕГЛАМЕНТАЦИИ ИНЫХ МЕР УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ И НЕКОТОРЫХ ЗАРУБЕЖНЫХ СТРАН

Бахур Олег Иванович

начальник кафедры уголовного права

УО «Академия Министерства внутренних

дел Республики Беларусь» полковник милиции,

кандидат юридических наук, доцент

Среди зарубежного уголовного законодательства, наибольший интерес в плане анализа норм, посвященных иным мерам уголовной ответственности, представляет уголовный закон стран, входящих в ЕАЭС в силу наиболее тесной интеграции в рамках данного межгосударственного объединения, а также общности правовых традиций.

Нормы советского уголовного права, предусматривавшие иные меры уголовной ответственности, были взяты за основу и учтены в уголовном законодательстве стран бывшего СССР и государств-участников ЕАЭС. УК Республики Беларусь 1999 года не явился исключением. Так, в действующем УК Беларуси закреплено четкое и полное законодательное определение каждого вида иных мер уголовной ответственности, что положило конец дискуссиям об их юридической природе. Современную систему иных мер уголовной ответственности наряду с такими известными ранее уголовно-правовыми институтами, как отсрочка исполнения приговора (ныне – осуждение с отсрочкой исполнения наказания – ст. 77 УК Беларуси), условное осуждение (ныне – осуждение с условным неприменением наказания – ст. 78 УК Беларуси), в УК был включен и такой вид, как осуждение без назначения наказания (ст. 79 УК Беларуси).

